

ՃԱՏՖԱՐԻ «ՍՈՒՐԻԱ ՅԱՐԳԵԼՈՎ ՄԻՋԱՉՊԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ, ԶԱՅՆ ՄԵՐՁԵՅՈՒՅԱԾ Է ԻՐ ԱՉՊԱՅԻՆ ՕՐԵՆՍԿՐՈՒԹԵԱՆ»

Երկուշաբթի, 6 Յունիս 2022-ին, «Ուաթան Անլայն» հաղորդեց, որ Սուրիոյ արտաքին գործոց փոխնախարար, միջազգային մարդասիրական օրենքի սուրիական ազգային յանձնախումբի նախագահ դոկտ. Պաշար ալ ճաաֆարի Կարմիր Մահիկ եւ Միջազգային օրենքի սուրիական յանձնախումբերուն կազմակերպած աշխատանքային օրուան բացումին յայտնեց, որ Սուրիա աշխարհի առաջատար երկիրներէն մէկն է միջազգային մարդասիրական իրաւունքի իրազեկման բարձրացման առումով՝ աւելցնելով. «Մենք Սուրիոյ մէջ քայլ մը առաջ ենք այս ոլորտին մէջ»:



Ճաաֆարի դիտել տուաւ, որ Սուրիա կ'աշխատի միջազգային մարդասիրական իրաւունքի կիրարկման, տարածման եւ Սուրիոյ ազգային օրենսդրութեան հետ մերձեցման համար:

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԸՆԲԱԹ` ՀԱՆՊԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՍԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ

Հովանաւորութեամբ «Պաաս» կուսակցութեան Հալէպի պետական համալսարանի քարտուղար դոկտ. Իպրահիմ Հատիտի, օրինութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի, կազմակերպութեամբ Զրիստափոր Ուսանողական Միութեան, Կիրակի, 5 Յունիս 2022-ի միջօրեի ժամը 12:00-ին, Հալէպի պետական համալսարանէն ներս տեղի ունեցաւ «Հայ



Մշակոյթի Շաբթուան» նուիրուած ցուցահանդէսին բացումը: Բացման արարողութեան ներկայ էին՝ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս

Ամէլա Զաղասեան
 Շաբ. Էջ 2

ԼԱԹԱՔԻՈՅ ՄԵՋ ՀՀ ԱՆԿԱՍՈՒԹԵԱՆ 104-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒՐՈՒԾ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Կազմակերպութեամբ ՍԵՄ-ի «Կայծակ» Մասնաճիւղին, Հինգշաբթի, 2 Յունիս 2022-ի երեկոյեան, Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Արարատ» սրահէն ներս տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 104-ամեակին նուիրուած տօնակատարութիւն՝ «Չարթնիր, Լա՛օ» խորագիրով:



Հանդիսութեան ներկայ էին Տեր Վազգէն Զինյ. Զեօշկերեան, ՀՅԴ Բիւրոյի անդամ Կիրո Մանոյեան, Պատկան Մարմնի ներկայացուցիչներ եւ խումբերամ բազմութիւն մը:

ՀԱԼՄ-ի փողերախումբը ազգային եւ յեղափոխական երաժշտական կատարումներով դիմաւորեց հիւրերը Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակին մէջ:

Հանդիսութեան սկիզբը բեմավար Նայիրի Կարապետեան-Գաթրճեան ներկաները հրաւիրեց մէկ վարկեան յոտնկայս յարգելու Նահատակներուն յիշատակը:

Ապա ան լուսարձակի տակ առաւ անկախութեան գաղափարը, անդրադարձաւ յատկապէս Արցախ աշխարհի առանձնայատկութեան, հոգեւոր եւ մշակութային արժեքներուն, որոնցմով կը բնորոշուի իր հայկական

Շաբ. Էջ 11

ՀԱՅԱՏԱՆԻ Ա. ԱՆԿԱՍՈՒԹԵԱՆ 104-ԱՄԵԱԿԻ ՓԱՌՆՈՒՔ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ` ԲԵՍԱՊԻ ՄԵՋ

«Մենք գաղութներու մէջ պիտի դառնանք ամրապնդման եւ զօրացման մէջ մէկ ազդակներ մեր հայրենիքին համար, որ կայ Արարատեան աշխարհին մէջ:

Գիտցիր, հա՛յ ժողովուրդ, որ արժեք ես դու եւ խօսք ունիս ասելու այս նամարդ աշխարհին»:

Ա. Ահարոնեան

28 Մայիս 1918-ը նոր էջ բացաւ հայ ժողովուրդի պատմութեան մէջ: 28 Մայիսը հայոց պետականութեան վերականգման տօնն է: Ան յաղթանակի եւ հպարտութեան տօն է համայն հայութեան համար եւ կը յիշատակուի փառաւոր հանդիսութեամբ եւ ժողովրդային մեծ խանդավառութեամբ: Ար-



դարեւ Զեսայի մէջ Շաբաթ, 28 Մայիս 2022-ին, Հայաստանի Հանրապետութեան Ա. Անկախութեան 104-ամեակին առիթով տեղի ունեցաւ քայլերդ-տողանցք՝ ՀԱԼՄ-ի «Զեսայ» Մասնաճիւղի շեփորախումբին մասնակցութեամբ, Ս. Աստուածածին եկեղեցիէն մինչեւ Զեսայ Համալիր: Այնուհետեւ Զեսայ Համալիրի ճաշարանէն ներս տեղի ունեցաւ ճաշկերոյթ-խորախ-

Թղթակից

Շաբ. Էջ 12

Խմբագրական

ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՈՒԺԸ՝ ԱՅՍ ՊԱՅՈՒՆ

Ռուսիա-Ուկրաինա պատերազմի վեր, աշխարհի ուշադրությունը կեդրոնացած է պատերազմի եւ անոր հետեւանքներուն վրայ: Այնուամենայնիւ, քանի որ պատերազմը ցարդ կ'երկարաձգուի եւ տնտեսական թե՛ ռազմական ծանր կացութեան կը մատնէ Ռուսիան, ԱՄՆ-ի եւ Եւրոպայի քաղաքագետները աւելի մեծ ուշադրութիւն կը դարձնեն այն ոլորտներուն, որոնց մէջ Ռուսիոյ զինուորական ազդեցութիւնը նուազ եղնելու եւ յատկապէս Յարաւային Կովկասի մէջ անոր ազդեցութիւնը սահմանափակելու հաւանականութիւն կը գտնեն: Այս պարագային Յարաւային Կովկասի հակամարտութիւններու բանակցութիւններու ճամբով լուծման եւ բռնութեան վերածուելու վտանգին բացառման միջոցները արեւմուտքին համար եական են:

Այս իսկ պատճառով արեւմուտքը լծուած է յատկապէս Արցախ-Ատրպայէյճան հակամարտութիւնը բանակցութիւններու ճամբով լուծելու եւ խաղաղութիւն հաստատելու դիւանագիտական լարուած աշխատանքի:

Բնականաբար Ռուսիա կը համարուի Յարաւային Կովկասի միջազգայնօրէն չճանչուած պետութիւններու, յատկապէս Արցախի Յանրապետութեան, ապահովութեան երաշխաւորը:

Ռուսիա կը հանդիսանայ Յարաւային Օսեթիոյ եւ Աբխազիոյ անկախացած հանրապետութիւններու ապահովութեան հիմնական գործընկերը: Ան ճանչցած ալ է երկուքին անկախութիւնը եւ հազարաւոր զօրքեր տեղակայած տուեալ տարածաշրջանի զինուորական կայաններուն մէջ:

Ռուսիոյ անմիջական դերը՝ որպէս Արցախի Յանրապետութեան ապահովութեան երաշխաւոր, աւելի նոր գարգացում է: Ռուսիա երկարատեւ է՝ որպէս դիւանագիտական կարեւոր խաղացող, եւ որպէս հակամարտող կողմերուն զէնք մատակարարող, Արցախի կարգավիճակին բանակցային լուծման գարգացումներուն մէջ, սակայն 44-օրեայ պատերազմէն ետք, ան 2000 խաղաղապահներ տեղակայեց Լեռնային Ղարաբաղ՝ զինադադարի գիծը վերահսկելու եւ Ատրպէյճանի հետագայ յառաջխաղացքը կանխելու համար:

Ռուսիոյ ռուսական կողմին Ռուսիա-Ուկրաինա պատերազմով տարուած ըլլալը կը բարձրացնէ այս տարածաշրջանի անապահովութեան մակարդակը եւ կը մեծցնէ բռնութեան վերսկսման վտանգը: Միւս կողմէ, սակայն, կարելիութիւն կու տայ Միացեալ Նահանգներուն եւ Եւրոպային առաջ մղելու բանակցութիւններու միջոցով լուծումներու տարբերակները:

Թեւեւ Վրաստան զուսպ քաղաքականութիւն կը վարէ ցարդ ու զինուորական միջոցներու նախաձեռնելու ո՛չ պատրաստակամութիւն կը ցուցաբերէ, ո՛չ ալ տրամադրութիւն, նկատի ունենալով տարածաշրջանի աշխարհաքաղաքական սուր բախումները, սակայն նոյնը կարելի չէ ըսել Ատրպէյճանի համար:

Ատրպէյճան ամէն միջոցի կրնայ դիմել, արեւելումները կրնայ փոխել անգամ՝ որպէսզի այս գերլարուած վիճակէն ու Ռուսիոյ տագնապալի կացութենէն օգտուելով պատերազմ սկսի՝ ապաւինելով իր դաշնակիցներուն, յատկապէս Թուրքիոյ:

Վերջին շրջանին Ատրպէյճանի կողմէ զինադադարի խախտումները յաճախակի դարձած են, հակառակ Ռուսիոյ քննադատութեան: Ատրպէյճան իր կարգին կը ձգտի խարխիւլ ռուսական խաղաղապահ ուժերու ներկայութիւնը Արցախ՝ Արցախի կարգավիճակը իր նախընտրած եղանակով վերջնականապէս կարգաւորելու համապատասխան իրավիճակ ստեղծելու համար:

Այս բոլորին լոյսին տակ, Արցախի եւ Յայաստանի համար իրավիճակի դիւանագիտական կարգ աւորման աւելի մեծ կարելիութիւններ կը ստեղծուին այս շրջանին, բացառելու գիշում յանուն խաղաղութեան պարտուողական տրամաբանութիւնը, ռուսական կողմին հետ որպէս ապահովութեան երաշխիք եւ դիւանագիտական լուծման միջնորդ, իսկ արեւմուտքին հետ որպէս Արցախի կարգավիճակի դիւանագիտական լուծման մղիչ ուժ յարաբերելու եղանակով:

ԵԱՀԿ Մինսքի դերակատարութեան պահպանումն ու Յայաստանի դիւանագիտական գերաշխոյժ աշխատանքը կրնան գէթ բացառել Արցախի կարգավիճակի ատրպէյճանական լուծման հաւանականութիւնը առնուազն մինչեւ ռուս-ուկրաինական պատերազմի աւարտ, երբ կը յըստականան ազդող ուժերու կարելիութիւններն ու ազդեցութեան սահմանները:

Ճակատագրական այս պահու լրջագոյն մտահոգութիւնն է, որ հայրենիքի փրկութեան համար առաւելագոյն կարելիութիւններու օգտագործման պայքարի մղած է Յայաստանի ընդդիմութիւնը:

Ընդդիմութեան մտահոգութիւնը խորքային է, որովհետեւ անյաջող դիւանագիտութիւնը կրնայ հողային նոր կորուստներու ճամբայ բանալ ու ազգային աղետի առաջնորդել Յայաստանն ու Արցախը:

«Գ.»

ՀԱՅ ՄՆԱԿՈՅԹԻ...

Սկիզբ՝ 1ջ 1

Սրբ. Եպս. Զօպուեան, Յալէպի պետական Յամալսարանի ղեկավար դոկտ. Մահեր Զարման, «Պասա» կուսակցութեան համալսարանի պատասխանատուներ, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխաններ, Յալէպի պետական համալսարանի տարբեր ճիւղերու տնօրէններ, պետական բարձրաստիճան պաշտօնեաներ, Ազգ. Կեդր. Վարչութեան եւ Բերիոյ Թեմի Ազգ. Վարչութեան ներկայացուցիչներ: Յալէպի Յամալսարանի ղեկավար դոկտ. Մահեր Զարման խօսք անելով ըսաւ, որ հայկական մշակոյթին նոր չէ որ կը ծանօթանանք, հայերը արդէն փաստած են իրենց ներկայութիւնն ու դերը Սուրիոյ մէջ, ապա լուսարձակի տակ առաւ հայ-արաբական բարեկամութեան արմատները եւ բարի գալուստ մարդեց ներկայներուն: Յուցահանդեսին ներկայացուած էին հայ գիրքերու գիւտին, մշակոյթին, պատմութեան նուիրուած պատասխաններ ու իրեր: Յուցահանդեսի բացումէն ետք տեղի



եան ներկայացուցիչներ: Յալէպի Յամալսարանի ղեկավար դոկտ. Մահեր Զարման խօսք անելով ըսաւ, որ հայկական մշակոյթին նոր չէ որ կը ծանօթանանք, հայերը արդէն փաստած են իրենց ներկայութիւնն ու դերը Սուրիոյ մէջ, ապա լուսարձակի տակ առաւ հայ-արաբական բարեկամութեան արմատները եւ բարի գալուստ մարդեց ներկայներուն: Յուցահանդեսին ներկայացուած էին հայ գիրքերու գիւտին, մշակոյթին, պատմութեան նուիրուած պատասխաններ ու իրեր: Յուցահանդեսի բացումէն ետք տեղի



ունեցաւ դասախօսութիւն, Յալէպի բժշկական համալսարանի սրահին մէջ, դասախօսն էր՝ Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան Ժիրայր Բէրսեան: Ան ներկայացուց հայ մշակոյթը իր գաւազան բաժիններով, ինչպէս՝ պարարուեստը, երաժշտութիւնը, թատրոնը, քանդակագործութիւնը, կերպարուեստը եւ այլն:

Երկրորդ օրուան յայտագիրը ընդգրկեց դասախօսական ձեռնարկ: «Յալէպի պատմութեան շարամանոււմը հայերու մետաքսով ու հիւսուածքով» խորագիրը կրող դասախօսութիւնը մատուցուեցաւ մարդկային գիտութիւններու եւ գրականութեան համալսարանի «Եպլա» լսարանէն ներս, ներկայացուց փաստաբան Մարիա Գաբրիէլեան: Ան լուսարձակի տակ առաւ Սուրիոյ եւ Յայաստանի բարեկամական կապերը, յայտնեց, որ հայերը Սուրիոյ մէջ ներկայութիւնն էին նախքան Տեղասպանութիւնը, իսկ Տեղասպանութենէն ետք անոնց թիւը քառասուկուեցաւ: Այնուհետեւ Գաբրիէլեան անդրադարձաւ յատկապէս Յալէպ քաղաքի բարգաւաճման հայութեան բերած ներդրումին, յիշեց օրինակներ՝ ճարտարագիտական, գիտական, արուեստի եւ արհեստի տարբեր ոլորտներու մէջ հայերու մուծած առաջատար նորութիւններէն, անդրադարձաւ տեղացի ժողովուրդին կողմէ հայութեան վայելած յարգանքին, հայկական անուններ կրող Յալէպի թաղամասերուն եւ վերջին տասնամեակի Սուրիոյ պատերազմին հայերու մեծ դերակատարութեան:

Մշակութային շաբթուան վերջին օրը տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր, ճարտարապետութեան համալսարանէն ներս, որուն իրենց մասնակցութիւնը բերին՝ կազմակերպող կողմին երիտասարդական թատերախումբը՝ ստուերով թատրերգութիւն մը ներկայացնելով, Յամազգայինի «Չուարթնոց» երգչախումբը, գեղ. ղեկավարութեամբ Գայիանէ Սիմոնեան-Տերեանի, դաշնամուրի ընկերակցութեամբ Լիզէթ Սերայտարեան-Աւընեանի, Յամազգայինի Ետրատային նուագախումբը, գեղ. ղեկավարութեամբ տղջիկ Ռաֆֆի Ապեճեանի, ապա արաբերէն երգերով ելոյթ ունեցաւ երգիչ Վահէ Յովհաննէսեանը:

Ձեռնարկներու այս շարքը առիթ հանդիսացաւ արաբ ուսանողներուն ներկայացնելու հայ մշակոյթի տարաբնոյթ հարստութիւնները:

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԱԶԳԱԿԱԴԵՄԻԱ «ԱՐՅԱՆԸ ԳԻ ԿՐՆԱՐ ԸԼԼԱԼ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԿԱԶՄԻՆ ՄԵՋ»

Հայաստանի Հանրապետության Գիտություններու Ազգային Ակադեմիան իր մտահոգությունը յայտնած է վերջին շրջանին Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության շուրջ ծաւալող քննարկումներուն և անցուդարձերուն գծով:

Ակադեմիան հրապարակած է յայտարարութիւն մը, ուր հաստատած է.

«Ըլլալով ապաքաղաքական կառոյց, որուն կանոնադրական հարցը գիտութեան զարգացումն է, ակադեմիան, սակայն, չի կրնար անհաղորդ մնալ մեր պետութեան և ազգին համար գոյաբանական քաղաքական մարտահրաւերներուն: Այդպիսի մարտահրաւեր է այսօր արցախահայութեան կարելի հայրենագրկման և ցեղասպանութեան վտանգը, որ կարմիր գիծ է մարդկութեան համար: Հազարամեակներ և հայոց քաղաքակրթութեան մաս կազմող Արցախը մեր հայրենիքի անբաժան մասն է, արցախահայութիւնը մեր ազգի ամենաերկար պետականութիւն պահպանած հատուածն է, մեր արեւելեան պատուարը: Սակայն սկսեալ առնուազն 20-րդ դարու սկիզբէն՝ կովկասեան թաթարները, թրքական աշակցութեամբ, այնուհետեւ անոնց ատրպէյճանցի հետնորդները կը գործադրէին բոլոր ջանքերը՝ վերացնելու հայկական որեւէ հետք Արցախի մէջ: Այդ ամենը կ'ուղեկցուէր մարդկութեան դէմ իրագործուող յանցանքներով: Այդ քաղաքականութիւնը շարունակուեցաւ նաեւ Խորհրդային Միութեան փլուզումէն վերջ և առանձնայատուկ թափ ստացաւ 2020-ի 44-օրեայ պատերազմի հետեւանքով ձեւաւորուած նոր իրողութիւններու պայմաններու մէջ՝ փաստացի վերածուելով Ատրպէյճանի Հանրապետութեան պաշտօնական գաղափարախօսութեան անքակտելի մէկ բաղադրիչին:



Այսօր մենք ականատես ենք այս արատաւոր քաղաքականութեան այնպիսի բացայայտ դրսեւորումներու, ինչպիսիք են յայտարարագրուած ծրագիրները ի սպառ վերացնելու հայկական պատմամշակութային հետքը իր վերահսկողութեան տակ անցած նոր տարածքներուն, հայատեացութեան սփռումը բոլոր կարելի միջազգային հարթակներուն, պատմութեան գեղծարարութիւնը, արհամարհանքը միջազգային իրաւունքին հանդէպ, յատկապէս, ռազմագերիներու հետ վարուելակերպի մասին ժնեւի համաձայնութեան ոտնահարումը և այլն: Ատրպէյճան պետութեան կազմին մէջ յայտնուելու պարագային Արցախին կը սպասուի արագ հայաթափում, արցախահայութեան՝ հայրենագրկում, ցեղասպանութիւն: Արցախը ոչ մէկ կարգավիճակով չի կրնար մաս կազմել պետութեան մը, որ իր քաղաքացիներուն արդէն քանի մը սերունդ կը դաստիարակէ մոլի հայատեացութեան մթնոլորտի մէջ: Հայաստանի Հանրապետութիւնը Արցախի ժողովուրդի անվտանգութեան և ինքնորոշման իրաւունքի իրացման երաշխաւորն է: Մենք չենք կրնար հրաժարիլ այդ հիմնարար սկզբունքէն: Հայաստանի Հանրապետութիւնը, Արցախի Հանրապետութիւնը այսօր կանգնած են լուրջ մարտահրաւերներու առջեւ: Հարկաւոր է համախմբել մեր ողջ ներուժը՝ դիմագրաւելու այդ մարտահրաւերները, լուծումներ գտնելու յառաջ եկած հարցերուն: Գիտություններու ազգային ակադեմիան պատրաստ է ՀՀ պետական իշխանութեան մարմիններուն տրամադրել մասնագիտական խորհրդատուութիւն, կրնայ դառնալ այն հարթակներէն մէկը, ուր կրնան քննարկուիլ համահայկական նշանակութիւն ունեցող հիմնահարցերը, լուծումներ և այլընտրանքային տարբերակներ առաջարկուիլ համահայկական օրակարգի ձեւաւորման համար»:

«ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ» ՇԱՐԺՄԱՆ ՀԱՆՐԱՇԱՐՔԸ ԵՒ ԵՐԹԸ ԴԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՍՏԱՆԱԶՈՒԹՅՈՒՆ

Երեւանի Ֆրանսայի հրապարակին վրայ 6 Յունիսին սկսաւ «Դիմադրութիւն» շարժման հանրահաւաքը:

Ելոյթներ ունեցան «Համախմբում» նախաձեռնութեան անդամ Մետուա Սողոմոնեան, Հայաստանի նախկին վարչապետ Հրանդ Բազարատեան, ընդդիմադիր պատգամաւորներ Արամ Վարդեանեան և Հայկ Մամիջանեան:

Ընթերցուեցաւ Հայաստանի Հանրապետության Գիտություններու ազգային ակադեմիայի երէկ տարածած յայտարարութեան հաստատած մը.

«Ատրպէյճանի պետութեան կազմին մէջ յայտնուելու պարագային Արցախին կը սպասուէ արագ հայաթափում, արցախահայութեան՝ հայրենագրկում, ցեղասպանութիւն: Արցախը ոչ մէկ կարգավիճակով կրնայ մաս կազմել պետութեան մը, որ իր քաղաքացիները արդէն քանի մը սերունդ կը դաստիարակէ մոլի հայատեացութեան մթնոլորտի մէջ: Հայաստանի Հանրապետութիւնը Արցախի ժողովուրդի անվտանգութեան և ինքնորոշման իրաւունքի իրագործման երաշխաւորն է: Մենք չենք կրնար հրաժարիլ այդ հիմնարար սկզբունքէն»:



Յուցադրուեցաւ կարճ տեսահոլովակ մը՝ «Դիմադրութիւն» շարժման կազմակերպած նախորդ շաբաթուան կարեւոր գործողութիւններէն:

Հակառակ բազմաթիւ փաստերուն, ապօրինութիւններուն, բռնութիւններուն մասին յստակ ապացոյցներուն, մինչեւ այս պահը որեւէ ոստիկան պատասխանատուութեան չէ ենթարկուած, Ֆրանսայի հրապարակին վրայ հանրահաւաքի ժամանակ, անդրադառնալով 3 Յունիսին Դիմիթեան փողոցին մէջ ոստիկանութեան կողմէ քաղաքացիներու նկատմամբ իրականացուած բռնի գործողութիւններուն իր ելոյթին մէջ ըսաւ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէլեան:

Ան հետեւեալ կոչը ուղղեց ընդհանուր դատախազութեան:

«Կը դիմեմ ընդհանուր դատախազին կան յստակ հրապարակուած փաստեր և ապացոյցներ, որոնք ամբողջութեամբ բաւարար են՝ անմիջապէս քայլեր ձեռնարկելու և ապօրինութիւններ գործած ոստիկանները տանելու ձերբակալման:

Հակառակ պարագային դուք ծեր քայլերով և գործողութիւններով կը նպաստէք նոր բռնութիւններու: Եթէ ժամանակին կանխելիք այն ոստիկաններուն գործողութիւնները, որոնք յստակ բռնութիւն կը գործադրէին քաղաքացիներուն նկատմամբ, 3 Յունիսին այդ դէպքերը չէին կրկնուէր», ըսաւ Իշխան Սաղաթէլեան:

Վրանները Ֆրանսայի հրապարակէն հաւաքելու կամ պայքարը դադրեցնելու մասին խօսակցութիւններուն անդրադառնալով՝ ան յայտնեց. «Այս վրանները ինքնանպատակ չենք տեղադրած: Տեղադրած ենք, որովհետեւ նպատակ ունինք: Մենք այս հրապարակէն դուրս գալու որոշում չունինք»:

Ինչ կը վերաբերի շարժումը դադրեցնելու խօսակցութիւններուն, Իշխան Սաղաթէլեան ընդգծեց՝ դադար չկայ:

Այնուհետեւ Իշխան Սաղաթէլեան առաջարկեց երթ իրականացնել դեպի Դատախազութիւն:

«Դիմադրութիւն» շարժման մասնակիցները կանգ առին Հայաստանի Հանրապետության ընդհանուր դատախազութեան շէնքին առջեւ, ուր ելոյթներ հնչեցին, ապա ցուցարարները վերադարձան Ֆրանսայի հրապարակ:

17 ՅՈՒՆԻՍԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՋ ՏԵՂԻ ԴԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ ՀԱՊԿ-Ի ԱՆԱՏՆԱԳՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՐԴԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԸ

17 Յունիսին Երեւանի մէջ տեղի պիտի ունենայ Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) Անվտանգութեան խորհուրդներու քարտուղարներու կոմիտէին հերթական նիստը՝ Հայաստանի Հանրապետության Անվտանգութեան խորհուրդի քարտուղար, ՀԱՊԿ-ի Անվտանգութեան խորհուրդի քարտուղարներու կոմիտէի նախագահ Արմէն Գրիգորեանի գլխաւորութեամբ: Այս մասին կը յայտնեն Հայաստանի Հանրապետության Անվտանգութեան խորհուրդի գրասենեակէն:



Անվտանգութեան խորհուրդներու կոմիտէի նիստի ընթացքին՝ նեղ և ընդլայնուած կազմով, պիտի քննարկուին ՀԱՊԿ-ի պատասխանատուութեան գօտիին մէջ ստեղծուած կացութեան և ՀԱՊԿ-ի անդամ երկիրներու անվտանգութեան մարտահրաւերներու և սպառնալիքներու չէզոքացման ուղղուած քայլերը, ինչպէս նաեւ այլ հարցեր:

Նիստի աւարտին ՀԱՊԿ-ի Անվտանգութեան խորհուրդի քարտուղարներու կոմիտէի նախագահը և ՀԱՊԿ-ի ընդհանուր քարտուղարը յայտարարութիւն պիտի կատարեն:

ՀԱՐՑԱԶԻՐՈՅ

ԿԻՐՕ ՄԱՆՈՅԵԱՆ. «ԿԸ ԿԱՐԾԵՄ ՈՐ ՇԱՏ ՀԵՌՈՒԻ ՉԷ ԱՅՆ ՊԱՀՐ, ԵՐԲ ԱՐԴԷՆ ԱԿՆԿԱՆՈՒՄ ԶԱՆԳՈՒՄԸ ԿԸ ԳՈՅԱՆԱՅ ԵՒ ՄԿՄԱԾ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԵՐԵՏԱԲՈՐՆԵՐԷՆ ՄԻՆՉԵՒ ՀԱՆԳԻՍՏ ՆՍՏԱԾ ԱՅԼ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ ԿԸ ՄԿՄԻՆ ԱԲԵԼԻ ԾԻՇԴ ԵՒ ՅՍՏԱԿ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ ՈՒՆԵՆԱՎ»

«Գ».- Ինչպե՞ս կը դիտեք Թուրքիոյ եւ Հայաստանի յարաբերութիւններու կարգաւորման հարցը: Թուրքիան Արցախի որոշ տարածքներու վերադարձուելուն պարագային նախապէս կը խոստանար բանալ իր սահմանները Հայաստանի հետ, բայց ցարդ չէ բացած, հակառակ անոր որ Ատրպէյճան բռնագրաւեց Նշուած տարածքները: Ի՞նչ բանի կը սպասուի Թուրքիան, նոր գիշումներու, նոր տարածքներու բռնագրաման ուրեմն:

ԿՄ.- 2008-2009 թուականներուն, այսպէս կոչուած ֆուլթայլային դիւա-նագիտութիւնը բանեցաւ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ, ինչ որ տեղ Թուրքիա չյաջողեցաւ, - մենք դժգոհ չենք որ չյաջողեցաւ, - ասարտին հասցնել, այսինքն՝ վաւերացնել զայն, որովհետեւ Ատրպէյճան շատ ուժեղ կերպով հակադէպ այդ գործընթացին: Թուրքիա, ըստ երեւոյթի, Ատրպէյճանի հետ անոր ակնկալած չափով չէր խորհրդակցած: Ի տարբերութիւն 2008-2009-ին, ներկայիս Թուրքիա ակնարկելով Հայաստանի հետ յարաբերութիւններուն, ամեն օր կը յայտարարէ, որ մենք այս բոլորը կը համադրենք Ատրպէյճանի հետ: Այսինքն այն ինչ որ Հայաստանի եւ Թուրքիոյ լիազօր պատուիրակները իրենց ամառին հանդիպումէն ետք նոյնանման հաղորդագրութիւն մը հրապարակեցին, որուն մէջ կ'ըսուի, որ այս բոլորը կ'ընթանան ամանց նախապայմաններու՝ սուտ է եւ սխալ, որովհետեւ ամանց նախապայմաններու չեն ընթանար. փաստը մէջտեղն է՝ Թուրքիա կը յայտարարէ որ ես այս գործընթացը կը համադրեմ Ատրպէյճանի հետ: Աւելին. մենք կը տեսնենք, որ Թուրքիոյ կողմէն անընդհատ ճնշում կայ, որ Հայաստան պէտք է Ատրպէյճանի հետ յարաբերութիւնները կարգաւորէ, հարցերը լուծէ, որ-

խանդավառ է Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու բնականոնացումով: Այստեղ նրբութիւն մը կայ, ես կը կարծեմ որ Ռուսիա չ'ուզէր որ 2008-2009-ի նման Հայաստան-Թուրքիա ինչ որ գործընթաց ըլլայ, որմէ ինք տեղեակ չըլլայ, որուն վրայ ինք ոչ մէկ ազդեցութիւն ունենայ: 2008-2009-ին այդպէս էր, ատիկա լրիւ ամերիկեան ծրագիր էր եւ այդ ծրագիրին համաձայն ալ ամառ գնաց այդ գործընթացը: Ներկայիս Ռուսիա չ'ուզէր նոյն կացութեան մատուցել: Միւս կողմէն Ռուսիա կ'ուզէ հնարաւորինս իր ազդեցութեան տակ, անուազն մօտ պահել Ատրպէյճանն ու Թուրքիան եւ ատոր համար ալ կ'ուզէ ցոյց տալ, որ ինք իրենց համար գլխացաւ մը լուծել կը փորձէ Հայաստանի վերաբերեալ: Այդուհանդերձ ես չեմ կարծեր որ իրականութեան մէջ Ռուսիա կ'ուզէ որ յարաբերութիւնները Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ այնքան լաւ ըլլան, որ Կիւմրիի մէջ գտնուող թիւ 102 ռազմակայանը դուրս ելլէ, անոր գոյութիւնը իմաստ չունենայ այլեւս, որովհետեւ այդ ռազմակայանը այնտեղ է հրաւերովը 33 ամառին նախագահին, որուն նոյնիսկ ոմանք կը մեղադրին ռուսատեացութեան մէջ՝ թրջափորութեան իբրեւ արդիւնք, սակայն Լեւոն Տէր Պետրոսեան ամեն ինչ փորձեց Թուրքիոյ հետ յարաբերութիւնները բնականոնացնելու, վերջաւորութեան եզրակացնելու համար որ Հայաստանի անվտանգութեան սպառնալիքը Թուրքիան է, այդ պատճառով ալ դիմեց Ռուսիոյ, որպէսզի այդ ռազմակայանը հաստատուի: Դետեւաբար չեմ կարծեր, որ Ռուսիա փափաքի որ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնները այնքան լաւանան, որ այդ ռազմակայանի անհրաժեշտութիւնը չզգացուի, ըսի սակայն, որ չ'ուզէր իր հակակշիռն դուրս գործընթաց մը ըլլայ եւ կ'ուզէ ինք ազդել այդ գործընթացին վրայ, որպէսզի երբ եւ ինչպէս ուզէ կանգնեցնէ կամ յառաջ մղէ զայն:

(շար. 2 եւ վերջ) Հարցազրոյցը վարեց Վեհան Պարսումեան



պէսզի ավելի ամառ երթայ: Ասկէ ավելի մեծ նախապայման չի կրնար ըլլալ: Թուրքիա այս անգամ կարծեք հանգիստ է, այսինքն խնդիր չունի անապարելու, որպէսզի այսպէս ըսուած այդ տարածքները ետ վերադարձուին Ատրպէյճանի, ինչպէս ըսիք արդէն՝ Ատրպէյճան բռնագրաւեւ է այդ տարածքները եւ ուրեմն հիմա պարզապէս անիթ գտեր է Հայաստանի վրայ ճնշելու եւ Ղարաբաղի հարցով, ե՛ւ իր հետ յարաբերութիւններու հարցով, այլապէս դեռ պարզ ալ չէ իրականութեան մէջ, որ Հայաստան եւ Թուրքիա ինչի համար կը բանակցին:

Եթէ բանակցութիւններուն նպատակը ընդամենը շրջափակումը հանելն է եւ դիւանագիտութիւններ հաստատելը, որը մեր տեսակետով պէտք է ըլլայ, ըսենք որ անոր համար բանակցելու շատ բանի կարիք չկայ, որովհետեւ շրջափակումը Թուրքիան ինք իրագործած է, ինք ալ պէտք է վերցնէ, իսկ դիւանագիտական յարաբերութիւնները հաստատելու համար պէտք չունիս տուեալ երկրին հետ բոլոր խնդիրները լուծելու: Աշխարհի մէջ բազմաթիւ 70-80 խնդիրներ ունեցող գոյգ կողմեր կան, որոնք ունին դիւանագիտական յարաբերութիւններ, բայց անպայման իրենց միջեւ եղած խնդիրները չեն լուծած: Թուրքիան ինք նման խնդիրներ ունի իր դրացիներուն հետ, նոյնիսկ՝ ՆԱՏՕ-ի անդամ Յունաստանի հետ, ՆԱՏՕ-ի անդամ Սլովակիան ու Անգլիան ունին միացեալ հարցեր, իսկ միջազգային օրէնքի համաձայն կարելոր չէ թէ հարցը մէ՞կ քառակուսի քիլոմէթրի մասին է, թէ՞ 10000 քառ քմ-ի մասին, եթէ վեճը իրաւականօրէն վեճ է, ուրեմն վեճ է, հետեւաբար կարելի չէ ակնկալել, որ բոլոր հարցերը լուծուին, ԱՄՆ եւ Գանատա ալ խնդիրներ ունին, Ճափոն եւ Ռուսիա ալ դիւանագիտական յարաբերութիւններ ունին: Ուրեմն յստակ է նախապէս ակնարկածս, որ Թուրքիա ինչո՞ւ կը փորձէ անպայման Ատրպէյճանի հետ այս բոլորը համադրել: Փաստօրէն Թուրքիա կը փորձէ քանի մը հարց լուծել եւ այդ հարցերը լուծելու շուրջ է որ բանակցութիւններ տեղի կ'ունենան, այլապէս բանակցութիւնները իսկապէս որ անիմաստ են: Ինչի՞ շուրջ կը խօսին: Երեք անգամ հանդիպել են, ինչի՞ մասին պիտի խօսին եթէ նպատակը ընդամենը շրջափակումը վերցնելն է ու դիւանագիտական յարաբերութիւնները, բայց քանի որ Թուրքիա այլ հարցեր կը փորձէ լուծել, ինչպէս նախապէս՝ երեսուն տարուան ընթացքին, Հայաստանի վերանկախացումէն ի վեր ալ միշտ փորձած է, հիմա ալ կ'ենթադրեմ որ նոյնն է: Պարզ է, որ Հայաստանի այս իշխանութիւնը եթէ ուզէ ալ, որպէս պարտուող կողմ, որպէս պարտուող քաղաքական ուժ, չի կրնար իսկապէս դիմադրել Թուրքիոյ այս ճնշումներուն: Մէկ բան այստեղ պէտք է նաեւ արձանագրել, որ կայ տպաւորութիւն, թէ Ռուսիա շատ

Թուրքիոյ նուրջ

ՀԱՍԻՉԻ ԹԱՆ ԹԱՄՐ ԳԻՂԸ ԹՐԺԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՒ ՀՐԹԻՈՒԿՈՇՄԱՆ ԹԻՐԱՆՍ

Երկուշաբթի, 6 Յունիս 2022-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ նախորդ Ուրբաթ 3 Յունիս 2022-ին, թրջական ուժեր բազմաթիւ հրթիռներ արձակեցին Հասիչի արուարձանի Թալ Թամր գիւղի ելեկտրածին կայանին եւ ընդհանրապէս բնակչութեան ուղղութեամբ, որուն հետեւանքով արձանագրուեցան նիւթական վնասներ եւ ելեկտրակայանը ամբողջութեամբ դադարեցաւ աշխատանքէ: Հասիչի ելեկտրակայանութեան Ընկերութենէն խմբակ մը անմիջապէս ուղղուեցաւ կայան եւ ետօրեայ աշխատանքէ ետք աւարտեց նորոգութեան աշխատանքը:

ԹՈՒՐԺ ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ ԿՄՈՒՋԱՐԿԷ ԹՈՒՐԺԻԱ-ԱՏՐՊԷՅՃԱՆ-ԻՍՐԱՅԷԼ ՌԱՉՄԱԿԱՆ ՊԱՇԻՆԵ ԿԱԶՄԵԼ

Թուրքիոյ «Պահպանողական Վերելք» կուսակցութեան նախագահ, գործարար Ահմետ Երլմազ ամառաբարկած է Թուրքիոյ, Ատրպէյճանի ու Իսրայէլի միջեւ գիւղատնտեսական պայմանագրութիւն կնքել եւ դաշինք կազմել: Երլմազ, դիտել տալով, որ տարածաշրջանին մէջ տեղի ունեցող զարգացումները մտահոգիչ են, յայտարարած է, որ Թուրքիա, Ատրպէյճան ու Իսրայէլ ստիպուած են շատ սերտ ռազմապաշտպանական պայմանագրութիւն կնքել:

«Թուրքիա պէտք չէ ուշանայ նոր աշխարհակարգի ձեւաւորման հետ միասին իր շուրջը ամանց ստեղծելու», ըսած է թուրք գործիչը ու ավելցուցած, որ անոր հետագային պէտք է միանան մնացեալ թրջական պետութիւնները:



ՆՇՄԱՐ

ՃՈՆՍԸՆԻ ՈՒՍԱԳՐԿԸ ԸԼԼԱ ՄԵՐԺՈՂՆԵՐ



Ս. Սահակյան

Բրիտանիոյ քաղաքական բեմին վրայ, մտաւորապէս տարի մը ամառ լարուած քաղաքական ռուսք մը պայթումի վիճակին հասաւ Երկուշաբթի, 6 Յունիսին, երբ վարչապետ Պորիս Ճոնսընի Պահպանողական կուսակցութեան ղեկավարութիւնը, անոր օրինազանցութիւնը անսերելի նկատելով, վստահութեան քուէի պահանջ դրաւ:

Ի՞նչ օրինազանցութիւն ըրած էր Ճոնսըն: Արդեօք իր համակիրները խորհրդարանին վրայ յարձակումի՞ մղած էր: Արդեօք իր երկրին հողերէն մաս մը թշնամիներուն նուիրած էր, բազմաձառար գիտուորներ գիտակցաբար մահուան գի՞րկը դրկած էր, ընդդիմադիրներուն արդար պահանջներն ու հարցադրումները անտեսելով՝ խորհրդարանին մէջ հաշուետուութեան չէ՞ր ներկայացած: Կամ արդեօք իր այլանդակ ու սանտր չտեսած մագէ՞րը անհաճոյ կը թուին կուսակցական ընկերներուն...

Ո՛չ. նման յանցանքներով չի մեղադրուիր Ճոնսըն: Ան կը մեղադրուի՝ որովհետեւ անցեալ տարի, յունիսեան օր մը, «քորոնան որո՞ւ շունն է»-ի տրամաբանութեամբ, իր տարեդարձին օրը բազմամարդ ու գաղտնի խնճոյք մը սարքած էր վար-

անդամներ՝ շուրջ 15 առ հարիւրը, արծարծեցին անկէ վստահութեան քուէն քաշելու պահանջը:

Երկուշաբթին կուսակցական երեսփոխաններուն համար եղաւ քուէարկութեան եւ «շունչը բռնած սպասելու» օր մը: Սպասողականութիւնը վարակեց ընդդիմադիրներն ու ժողովուրդը: Ի վերջոյ, յայտարարուեցաւ, որ Ճոնսըն փրկուած է 148-ի դէմ 211 քուէով:

Սա կը նշանակէ, որ Ճոնսըն այս հանգրուանին պիտի չկորսնցնէ 10 Տաունիսկ Սթրիթի (վարչապետարանի) բանալին, սակայն բացայայտ նահանջ մը կրած է, անոր վարկը հարուած ստացած է, նոր ալիքներ կրնան յաջորդել: Յիշեցում կը կատարուի, որ նախորդ վարչապետ Թերեզա Մէյն ալ նման փորձաքարի ենթարկուեցաւ չորս տարի ամառ, վստահութեան քուէն չկորսնցուց, սակայն ի վերջոյ քաղաքական բեմէն դուրս նետուեցաւ... * * *

Այս տողերը արձանագրելով, նպատակ չունինք Անգլիոյ քաղաքական կուսակցութեան վարքագիծը իտեալականացնելու: Ընդհանրապէս Բրիտանիոյ միջազգային քաղաքականութեան աղետաբեր հետեւանքները ծանօթ են բոլր-

մինչեւ տնտեսական, եւ այլ երկիրներու հետ յարաբերութիւններու թղթածրարները (վաղը մարդիկ կրնան մինչեւ իսկ Եւրոպական Միութենէն դուրս գալու քայլն ալ կապել այս փոթորիկին, ըսելով, որ Ճոնսընի այդ դերը անարտաձ է եւ այլեւս անոր ներկայութիւնը կրնայ երկրորդական թուիլ), այսինքն՝ հաւանական եւ անհաւանական... բազում հաւանականութիւններ կրնան մատնանշուիլ: Կարելի էր այն է, որ Ճոնսընի կուսակցական ընկերները, անոր հետ քալողները չեն սպասեր, որ ան ահաւոր կորուստներու մտանէ իրենց երկիրը, այլ կը բաւէ, որ անոնք իրենց ղեկավարին արարքներուն մէջ տեսնէ Օրէնքի անտեսում, ոտնակոխում, եւ ահա, պատրաստ են պահանջելու, որ ետ քաշուի անոր տրուած վստահութիւնը: Այսինքն գրուանին, ուսմին պայթումը աղետալի չէրաւ վարչապետին համար, սակայն ան ուժգին հարուած մը ստացած է արդէն:

Ուշագրաւ է նաեւ այն կէտը, թէ Ճոնսընի դէմ խումբ մը պահպանողականներու ըմբոստութիւնը պայթեցաւ քիչ մը անորոշութեան մէջ. թէ՛ վարչապետութեան հին ու նոր յաւակնորդներ կան անոր կուսակցութեան (նաեւ ընդդիմադիրներուն) շարքերուն, սակայն Ճոնսըն ուղղակի եւ սուր մարտահրաւեր մը չէր դիմագրաւեր անհատ մրցակիցներէ: Մարդիկ չեն մտածեր, թէ եղածը աթոռակոխի է, հարց չեն տար, թէ արդեօք ո՞վ պիտի յաջորդէ Ճոնսընի՞ եթէ ան կորսնցներ վստահութեան քուէն, գալիքը հի՞ն է, թէ՞ սոր: Գործը կը կայանայ մէկ կէտի վրայ: Կուսակցութեան ղեկավարն ու վար-

չապետի պաշտօնը վարողը օրէնքը խախտած է, ուրեմն, արժանի չէ այդ պաշտօնին: Մարդիկ կը մտածեն, որ «ան նախ պետք է հրաժարի, յետոյ կը նայինք, թէ ո՞վ կրնայ ըլլալ արժանաւոր յաջորդը»:

* * *

...Արդեօք անգլիացիք կամ որեւէ այլ ինքզինք յարգող, աշխարհի քարտեզին վրայ իր տեղը ճանչցող եւ պահպանելու համար պայքարելու պատրաստ ժողովուրդ ի՞նչ պիտի ըներ, եթէ իր վարչապետը հայրենիքէն հսկայ տարածքներ գիշեր թշնամիներուն, մարդկային հսկայական կորուստներու, մշակութային ժառանգութեան փոշիացման պատճառ դառնար, աւելին՝ սեփական հայրենիքէն սոր բաժիններ



թշնամիին նուիրելու պատրաստակամութիւն յայտնէր, յայտարարելով, որ անոնք թշնամիին պատկանած են՝ քարտեզի վրայ ու պետութեան շարքին այդ թշնամիին յայտնութենէն շարտ առաջ, դառնար թշնամիին մէկ իրողական բանբերն ու պատգամաբերը...:

(Աչք ունեցողը թող տեսնէ, ականջ ունեցողը թող լսէ, դատողութիւնը չկորսնցնողն ալ թող դատէ եւ գործի անցնի):



Ճոնսըն կը տօնէ օրէնքի խախտումը

չապետարանի իր գրասենեակին մէջ, ոտնակոխելով համաճարակին ստեղծած պայմաններուն մէջ բազմամարդ հաւաքներ չկազմակերպելու օրէնքը: Եւ որովհետեւ նման բաներ չեն կրնար ընդմիջտ գաղտնի մնալ, մամուլը պայթեցուցած էր ամառն ռուսքը: Այդ օրէն սկսեալ, ընդդիմադիրներ եւ ժողովրդային զանգուածներ միացած էին մամուլի կոչերուն, պահանջելով Ճոնսընի հրաժարականը: Վարչապետը նախ անտեղի գտած էր մեղադրանքները եւ ինքզինք անմեղ հռչակած էր, սակայն յետոյ, իրականութիւններու ճնշիչ հեղեղին դիմաց, խոստովանած էր իր յանցապարտութիւնը եւ ըսած էր, թէ «կը կրէ մտքորոշական պատասխանատուութիւնը»: Կաթասն շարունակած էր եռալ, եւ ահա, նոյնինքն Ճոնսընի կուսակցութեան

րիս (այս ծիրին մէջ՝ Ատրպեյճանին տրամադրուած գօրակցութիւնը, անոր հետ շահակցական հաշիւներուն հետեւանքները՝ մեր հայրենիքին վրայ): Սակայն կ'արժէ պահ մը կանգ առնել քանի մը աղաղակող իրականութեան առջեւ:

Նախ յստակ է, որ պահպանողական 148 երեսփոխանները իրենք զիրենք չեն նկատեր Պորիս Ճոնսընի «ուսապարկեր»ը եւ երբ կը տեսնեն, որ իրենց ղեկավարը ՕԲԵՆԸ ոտնակոխած է, չեն վարանիր ըսելու, որ ան արժանի չէ շարունակելու պաշտօնավարութիւնը:

Բնականաբար մեկնաբաններ վաղը կրնան հազար ու մէկ վերլուծուն յետին-թաքուն պատճառները, սկսելով կուսակցութեան ղեկավարներու միջեւ ներքին մրցակցութենէ,

ԱՐԱՍԸ...

Սկիզբ՝ էջ 7

անոր համար աշխատեցաւ»:

Քոփթաշ կ'անդրադառնայ նաեւ հրատարակչութեան ընթերցողներուն, որոնց մասին հարցադրում մը ըրեր էինք այս գրութեան սկիզբը:

«Թուրքիոյ մէջ անոնք, որոնք ազատամիտ են, ճախակողմեան են, մօտ են այս գաղափարներուն եւ ժողովրդավար հայեացք մը ունին, կ'ուզեն, որ Թուրքիան փոխուի, ասոնց մէջ մեր ընթերցողները շատ են, կան, կ'աջակցին մեզի, միշտ կը գնահատեն մեզ եւ մեր գիրքերուն մասին թրջական կայքէջերու մէջ յօդուածներ կը հրատարակեն»:

Գետաքըքական է կարդալ, որ Արապի ամենէն շատ սպառող գիրքերուն հեղինակը Մկրտիչ Մարկոսեանն է, որուն թրքերէն ամառն գիրքը՝ «Կեպուրի Թաղ»-ը (Կեպուր Մահալլեի) հրատարակուած է նաեւ քրտերէնով, իսկ թրքերէնը ունեցեր է քսան հրատարակութիւն:

Եւ խորունկ ցաւով է, որ կ'անդրադառնանք թէ երբեմնի Արեւմտա-

հայ գրականութեան կեդրոն հանդիսացող եւ այնքան մեծ անուններ կտակած Պոլիսը - այսօր արդէն Իսթամպուլ - հայերէնով ստեղծագործող քիչ անուններ ունի՝ Կարին Բարաքաշլը, որ փորձած է հայերէն ալ գրել, Ժագլին Չելիք, Վերճիհան Չիֆլիօղլու (հիմա արդէն թրքագիր), Մարգար Եսայեան, որ երեսփոխան է Մեծիսի մէջ եւ Գեորգ Գիրգորեան, որ այլեւս շատ քիչ կը գրէ:

Գակառակ այս բոլորին, այսօր Արասը Թուրքիոյ մէջ իր վարկը ունեցող հրատարակչատուն մըն է - 2019 թուականին ճանչցուեր է որպէս «Տարուայ Զրատարակչատուն»-ը - որ իրապէս մեծ աշխատանք կը տանի սփիւռքահայ եւ արեւմտահայ գրականութիւններուն տարածման մէջ:

Այս բոլորը կը գրուին, որովհետեւ վերջերս Երեւանի մէջ լոյս տեսած է նախկին հալէպահայ, «Գանձասար»ի նախկին խմբագրուի Մարի Մերթիսանեան-Երալեանի հայերէնի թարգմանած Ֆերման Թորոսարի «Աքսոր» գիրքը, որուն թրքերէն թնամիկը հրատարակուած է Արաս հրատարակչատունէն եւ որուն պիտի անդրադառնամ յաջորդիւ:

«ՆԱՅԻՐԻ»-Ի ՕՐ ԵՒ ԳՐԱԳԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄ

ՍՕ Խաչի «Նայիրի» Մասնաճիւղի Վարչութիւնը կազմակերպեց աւանդութիւն դարձած «Նայիրիի Օրուան» ձեռնարկը, որ այս տարի նուիրուած էր «Նայիրի» գրադարանի վերաբացումին: Ձեռնարկը տեղի ունեցաւ Ուրբաթ, 20 Մայիս 2022-ի յետմիջօրէին, ժամը 4:30-ին, Ընկերաբժշկական կեդրոնի «Գ. Զամալեան» սրահէն ներս, խաչուիկներու ներկայութեամբ:


Առաջին ակնարկով ուշագրաւ էր սեղաններու վրայ ցուցադրուած արուեստի գործերը՝ փայտեայ խաչքարեր, նուէր, կաւե կուժեր, բաժակներ, թանկարժէք առարկաներ եւ այլն:

Ձեռնարկին բացումը կատարուեցաւ ՍՕ Խաչի օրինեղով: Այս օրուան հանդիսավար, մասնաճիւղի վարչութեան անդամ Տիանա Թովմասեան բարի գալուստի իր խօսքէն ետք բեմ հրաւիրեց մասնաճիւղի վարչութեան ատենապետուհի Ժէնի Պօշկեպեանը:

Պօշկեպեան ըսաւ, որ հայ լեզուի պահպանման միջոցներէն մէկն ալ եղած է գրադարանը: Անցեալի եւ ներկայի խաչուիկներուն մտահոգութիւնն ու պարտականութիւնը եղած է իր անդամները մղել ընթացակարգին:

Ուստի մասնաճիւղի վարչութիւնները ջանք չեն խնայած պատերազմի ամենավտանգալից օրերէն մինչեւ օրս աշխատիլ փրկելու համար հայ գիրքերը, որովհետեւ անոնք մաս կը կազմեն մեր մշակոյթին եւ մեր գրականութեան գանձերն են՝ մեզի ժառանգ մնացած:

Ձեռնարկը ընթացք առաւ ու գեղարուեստական յայտագիրով Սօսէ Սեմերճեան քաղցրահունչ ձայնով մեկնաբանեց «Մախմուր Աղջիկ» երգը, իսկ Արինա Պօշկեպեան տպաւորիչ ու ազդեցիկ առողջամտութեամբ ասմունքեց եղիշէ Զարենցի «Քարտեզ»-ը: Այնուհետեւ երաժշտական ներդաշնակ կատարումով Տեսիլ Սարեան (ջութակ) եւ Սարիկ Պիթար (կողմնասարիկ) նուագեցին «Ալ Այլուդս» երաժշտական կտորը: Զանգեղի անակնկալով մը վարչութեան ատենապետուհին յայտագիրի մասնակիցներուն ծաղկեփունջեր նուիրեց:



Օրուան բանախօս, մասնաճիւղի վաստակաշատ ընկերուհի Մարալ Սեմերճեան յետադարձ ակնարկով մը ներկայացուց 1960 թուականին հիմնուած «Արագած»՝ այժմու «Նայիրի» գրադարանը, որ յիսունական թուականներէն ի վեր կը գործէ հին դարմաստան կեդրոնէն ներս: Ան դիտել տուաւ, որ 1962-ին Նոր Գիւղի դարմաստանը կը փոխադրուի ՍՕ Խաչի սեփականութիւնը եղող Արծուեթոյնը, կը կազմուի գրադարանի յանձնախումբ, ու վերջինս կը լծուի աշխատանքի: ՍՕ Խաչի Շրջ. ԺԸ. Պատգամաւորական ժողովէն ետք, նորակազմ Շրջ. Վարչութիւնը կը ծրագրէ դարմաստան նոր շէնք մը կառուցել, նկատի առած որ հինը գրեթէ կիսափուլ եղած էր: Նոր Գիւղի վարչութիւնը իր գործունէութիւնը կը շարունակէր Ազգ. Առաջնորդարանին կողմէ տրամադրուած Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանի յարակից բակին մէջ: Բոլոր գոյքերը կը փոխադրուին այնտեղ, իսկ 733 գիրքեր՝ այլ ապահով վայր:

1980-1983-ին վարչական ընկերուհիներէն Սիրան Եագուպեան կը ստանձնէ այդ գիրքերը իր տան մէջ պահելու պատասխանատուութիւնը մինչեւ նորակառոյց շէնքին աւարտը: 1986-ին գրադարանի գիրքերը կը փոխադրուին նորակառոյց դարմաստան 5-րդ յարկ եւ գրադարանը մասնաճիւղին անունով կը կոչուի «Նայիրի» գրադարան: 1989-ին գրադարանին բացումը կը կատարուի Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդ Գեղ. Տ. Սուրեն Սրբ. Գաթարոյեանի ձեռնամբ, Շրջ. Վարչութեան ատենապետուհի Անահիտ Եպիփոսեանի եւ մասնաճիւղի վարչութեան օրուան ատենապետուհի Արփի Ալընեանի ներկայութեամբ: 1993-ին «Նայիրի» գրադարան այցելած է Ներսէս Աբբահայրը:



Այնուհետեւ բանախօսուհին լուսարձակի տակ առաւ գրադարանի յանձնախումբի անդամուհիներուն գործունէութիւնը:

Գրադարանի յանձնախումբը հայ մանուկին հոգիին մէջ վառ պահելու համար հայկական տոհմիկ օրերը եւ աւանդոյթները ինչպէս նաեւ ծանօթացնելու հայկական տօները, կազմակերպած է տարբեր ձեռնարկներ:

Գրադարանի ընթերցողներուն մեծամասնութիւնը մանուկներ էին: Անոնք եռանդով, շաբաթը երկու անգամ գրադարան կ'այցելէին եւ գիրքերու կողքին քաջալերական նուէրներ կը ստանային: Գրադարանի տարեկան հասոյթը ամբողջովին գիրքերու գնման կը տրամադրուէր:

733 գիրքերով սկսած այս գրադարանը այսօր հարստացած է հազարաւոր գիրքերով, կը պարունակէ հայ գրականութիւն, ազգային դէմքեր եւ

դէպքեր, կրօնական գիրքեր, օտար գրականութիւն թարգմանուած հայերէնի եւ արաբերէնի, մանկապատանեկան գիրքեր (հայերէն, արաբերէն, անգլերէն, ֆրանսերէն) եւ մանկական գիրքերու ճոխ հաւաքածոյ:

Նայիրի գրադարանը 2009-ին մաս կազմած է հալեպահայ գրադարաններու կազմակերպած ժողովին Ն. Աղբալեան սրահի գրադարանէն ներս, ուր մեծապէս գնահատուած է փոքրերու կողմէ նախընտրելի գրադարան մը ըլլալուն համար:

Զայ օգնութեան Միութեան 100-ամեակին առիթով ԶՕՄ-ուիկներու Զալեպ այցելութեան ծրագրին մէջ էր նաեւ ՍՕ Խաչի Նայիրի Մասնաճիւղի կեդրոն ու գրադարան այցելութիւնը:

14 Փետրուար 2016-ին Նոր Գիւղի շրջանի հետզհետէ սաստկացող հրթիռարձակումներուն հետեւանքով ընկերաբժշկական կեդրոնը, վարչական գրասենեակներն ու «Նայիրի» գրադարանը մեծ վնասներ կը կրէն: Օրուան վարչական ընկերուհիներու յանդուգն աշխատանքով գրադարանի բոլոր գիրքերը, կահոյքը եւ պահարանները կը տեղափոխուին Կիլիկիա Ազգ. շէնքի Պ. Պատիկեան գրասենեակ:

21 Յունիս 2016-ի յիշատակուած «Նայիրի» Մասնաճիւղի Մշակութային օրուան ձեռնարկը նուիրուած էր «Նայիրի Գրադարանին Օրուան»: Յանձնախումբը յարմար կը նկատէ դիմել խաչուիկներուն «Պահպանել Զայ Գիրքը» լրդունգով, պատերազմական շրջանին կորուստէ փրկելու համար հայ գիրքերը:

Նկատի ունենալով անապահովութեան եւ վտանգի ենթարկուած հալեպահայութեան կեանքը ու ծայր առած գաղթը, որուն հետեւանքով ալ յաճախ հայերէն գիրքերուն փողոցներու մէջ յայտնուած ըլլալը, խաչուիկները հաւաքեցին հարիւրաւոր գիրքեր ու յանձնեցին գրադարանի յանձնախումբին:

20 Մայիս 2022-ին, շնորհիւ վերջին տարիներու տարուած աշխատանքին, վերանորոգուեցաւ եւ լրումին հասաւ «Նայիրի» գրադարանը, որ ՍՕ Խաչի միակ գրադարանն է, բարերարութեամբ Զայրապետ Զայրապետեանի



երկու զաւակներուն Նարեկ եւ Ալին Զայրապետեաններու, որոնք ի սրտէ կը շնորհաւորեն ՍՕ Խաչի Նայիրի մասնաճիւղի վարչութեան ու Նայիրի գրադարանի հրաշալի գործը եւ սրտանց կը փափաքին, որ խաչուիկները շարունակեն գնահատել հայ գիրքին անփոխարինելի դերը ու այս աշխատանքը արդիւնաւորել իրենց նման փոքրիկներու հայերէն գիրքեր ընթերցելու մղելով:

Բանախօսուհին երափակելով իր խօսքը ըսաւ. «Այսօր ՍՕ Խաչի «Նայիրի» մասնաճիւղի զինուորագրեալ խաչուիկները կը վերահաստատեն իրենց յանձնառութիւնը պահպանելու գրադարանապահութեան մշակոյթն ու մեր երիտասարդները մղելու ընթերցանութեան»:

Բանախօսութեան աւարտին, մասնաճիւղի ատենապետուհին խորհրդանշական յուշանուէրով մը գնահատեց բանախօսին հետաքրքրական ու շահեկան դասախօսութիւնը:

Այնուհետեւ ժամանագրական կարգով ցուցադրուեցաւ «Նայիրի» Մասնաճիւղի Վարչութեան եւ գրադարանի յանձնախումբերու մեղուջան աշխատանքը ցոլացնող տեսերիկ մը:

Յայտագրի յաջորդ բաժնով մասնաճիւղի ատենապետուհին բեմ հրաւիրեց 2016 տարեշրջանի վարչական կազմի ընկերուհիները, նաեւ ընթացիկ շրջանի գրադարանի յանձնախումբը, որոնք գնահատուեցան օրուան խորհուրդը պարփակող յուշանուէրներով:

Շրջ. Վարչութեան ատենապետուհի Սիրան Ամպարճեան շնորհակալութիւն յայտնեց օրուան բանախօսին բժախնդրութեամբ պատրաստուած բանախօսութեան համար, շնորհաւորեց գնահատուող ընկերուհիները, գնահատեց գեղարուեստական յայտագիրին մասնակցողները եւ իր խօսքը եզրափակեց Մուշեղ Իշխանի խաչուիկին նուիրուած հետեւեալ խօսքով:

«Օգնութեան Խաչի շարքերուն մէջ հայ կիներ միայն ընտանիքին նուիրուած պատուաւոր մայր մը չէ, այլ ազգին նուիրուած զինուոր, որ լաւ գիտէ իր առաքելութեան պարտքը, լաւ կը յիշէ մեր դատին արժէքը եւ քաջածախս է հայակերտման եւ հայապահպանման համար անհրաժեշտ բոլոր գործունէներուն»:

Աւարտին գրադարանի վերաբացումը կատարուեցաւ ձեռամբ Շրջ. Վարչութեան ատենապետուհի Սիրան Ամպարճեանի եւ մասնաճիւղի ատենապետուհի Ժէնի Պօշկեպեանի, ներկայութեամբ շրջ. վարչութեան, նստավայրի մասնաճիւղերու վարչութեանց, քոյր մասնաճիւղերու վարչական ներկայացուցիչներուն, գրադարանի յանձնախումբին եւ համախմբուած խաչուիկներուն:

Ներկաները շնորհաւորեցին վերանորոգուած ՍՕ Խաչի Ընկերաբժշկական կեդրոնի 5-րդ յարկէն ներս հաստատուած «Նայիրի» գրադարանը, որ այսօր գաղութի կը ներկայանայ բարեգարգուած եւ գեղեցիկ պահարաններով կահաւորուած ու բժախնդրուն պահպանուած հազարաւոր գիրքերով:

Պրիսմակետ

ԱՐԱՍԸ



Մարուշ Երամեան

Արաս հրատարակչատունը երախտաշատ աշխատանք կը տանի, ոչ միայն հրատարակելով, այլ և թարգմանելով իսթամպուլահայ գրողներու գործերը՝ թրքերէնէ հայերէն, կամ հայերէնէ թրքերէն:

Քիչ մը բան գիտնալով Թուրքիոյ ներքին քաղաքականութեան մասին, կասկածով կը մօտենամ այս թարգմանութիւն-հրատարակութիւններու հարցին: Օրինակ՝ Ֆերման Թորոսլարի, կամ Ֆերման Թորոսեանի գիրքը կարդացողները որո՞նք են՝ թրքահայեր, թե՞ նաեւ թուրքեր, որովհետեւ մեզի համար այնքան հազուադէպ բան է արժանանալ վեց հրատարակութիւններու, ինչպէս արժանացեր է Թորոսլարի «Աքսոր» գիրքը: Կը յիշեմ Լեւոն Չաւեն Սիւրմելեանի «Լոյս Չուարթ»-ը, որ երեք հրատարակութիւններու արժանացեր էր, երբ ինք տակաւին շատ երիտասարդ էր: Անշուշտ այստեղ նկատի չեմ առնել Սովետական Չայաստանի մէջ հրատարակուած գիրքերուն տպաքանակը, սակայն ինչու ևս բազմաթիւ չեն քանի մը հրատարակութիւններու արժանացած գիրքերը: Ի՞նչ է գաղտնիքը:



Արաս հրատարակչութեան կարգախօսն է «Պատուհան՝ դէպի հայ գրականութիւն»:

Կը նշանակէ, որ անոր գլխաւոր թիրախը թրքահայութիւնն է, որ հայ գրականութիւն կարողալու չափ հայերէն չի գիտեր:

Ասիկա կը հաստատուի Արասի կայքէջին դրուած հետեւեալ բացատրութեամբ.

«Այն ստեղծուել է որպէս Թուրքիոյ հայերու մշակութային ժառանգութիւնը ապագայ սերունդներուն կապելու կամուրջ»:

Կ'ըսուի նաեւ, թէ «1993-ին Յրանդ Տիկի, Սկրտիչ Մարկոսեանի եւ Երուարդ Թովմասեանի հիմնադրած «Արաս» հրատարակչատունը երկրին մէջ (Թուրքիոյ) հայերէն եւ թրքերէն գիրքեր հրատարակող միակ հրատարակչատունն է»:

Թուրքիոյ պետութիւնը, որ այնքան խիստ է հայերուն հանդէպ, ինչպէ՞ս արտօնած է, որ «հայերու մշակութային ժառանգութիւնը» գեղեցկօրէն հրատարակուի եւ տարածուի, հասկնալի չէ, մասնաւորապէս որ հրատարակչատունը «կը տպագրէ նաեւ հայոց պատմութեան, ազգագրութեան, ժողովրդական նիստուկացի վերաբերող ուսումնասիրութիւններ»:

Երբ կը կարդանք Արասի հրատարակած գիրքերու ցանկը, չենք կրնար մեր գարմանաքը զսպել, երբ այդ ցանկին մէջ կը գտնենք օրինակ Չապել Եսայեանի «Աւերակներու Մէջ» գիրքը:

2017 թուականին Գանատայի «Յորիզոն» թերթը հարցազրոյց մը ունեցած է Արաս հրատարակչատան տնօրէն Ռոպերտ Զոհրաբի հետ, որ կ'ըսէ.

«Թուրքիոյ մէջ եթէ հայ էք, առաւել եւս մտային աշխատանք կը տանիք՝ բոլոր շրջանները դժուար են»: Սակայն Արասէն առաջ Ռազմը 2արաքօլու հիմնած էր «Պելկէ» հրատարակչութիւնը, որուն հրատարակած Թաներ Աքչամի առաջին գիրքը՝ «Յայոց Տեղասպանութիւնը եւ Մարդկային Իրաւունքներու Յարցը», 1994 թուականին կարծեք ճամբայ հարթած էր Արասի համար:

Արասը հրատարակելով Տեղասպանութեան գոհ դարձած հեղինակներու գործերը, կարծեք կ'ուզէ անուղղակիօրէն Թուրքիոյ մէջ ապրողներուն՝ թուրքերուն եւ քիւրտերուն անդրադարձնել, որ «այս երկրին մէջ, այս հողերուն վրայ հայերն ալ կային եւ կորսուեցան» եւ ձեռով մը մղել գիրքնք, որ հարցադրումի ենթարկեն Թուրքիոյ ուրացումը Տեղասպանութեան:

Այս առիթով կ'արժէ յիշել վերջերս մահացած իսթամպուլահայ գիւղագիր Մկրտիչ Մարկոսեանի յիշած մէկ մանրապատումը.

«Մեծ համագումարի մը կը մասնակցէի եւ խօսքիս մէջ նման հարցում մը ըրի՝ «Մեր գրողները գրեթէ բոլորն ալ 1915 թուականին մահացած են, ինչպէս կը կարդանք իրենց կենսագրութիւններուն մէջ: Ասիկա շատ զարմանալի կը գտնեմ. արդե՞ք այդ թուականին համաճարակ մը եղած է, որուն գոհ գացեր են այդքան մեծ թիւով գրագետներ ...»: Այսքանը ըսի եւ տեղս նստայ»:

Իր հարցազրոյցին մէջ եւս Զոհրաբ Նման բան մը կ'ըսէ.

«Յայերը որպէս փոքրամասնութիւն, անշուշտ կային, այդ աչքով կը նայուէին, բայց այս երկրի մշակութային իրենց ներդրումը խօսակցութեան առարկայ չէր: Ուրեմն ասիկա մեր պաշտօնն էր նախ եւ առաջ,

Շար.՝ էջ 5

ԼԱՅՈՂ ԱԶԲԸ



Թարգմանեց՝ Լեւոն Վրդ. Եղիայեան

Դաւիթ իր ապաշխարութեան ընթացքին շատ լացաւ եւ իր Սաղմոսները հեծկլտուքով, արցունքով եւ տխրութեամբ լեցունեցան՝ իր կատարած մեղքերուն համար: Ապաշխարութեան սաղմոսներէն մէկուն մէջ ան կ'ըսէ. «**Յեծեծելն յոգնեցայ, ամէն գիշեր եւ լացով լուացի իմ մահիճս, եւ իմ արցունքներովս թրջեցի անկողիս**» (Սղ 6.6): Աստուածաշնչական ուրիշ հատուածի մը մէջ մարգարէն հետեւեալը կը գրէ. «**Երանի՛ թէ գլուխս՝ ջուրի ու աչքերս արցունքի աղբիւր ըլլային, որպէսզի ցորեկ ու գիշեր լայի իմ ժողովուրդիս աղջկան սպաննուածներուն համար**» (Եր 9.1):



Սուրբ Յովհաննէս Սանդիսեցի կ'ըսէ. «**Լացող աչքը նորոգող առաջան է ապաշխարութեան մկրտութեան համար**»: Կարծեք աչքը մկրտութեան աւագան կը դառնայ, որմէ հոսող արցունքը հոսելով սիրտին վրայ կը մաքրէ զայն: Եւ մենք կ'աղօթենք՝ ըսելով. «**Տուր մեզի Տէ՛ր, բազում արցունքի աղբիւրներ, ինչպէս տուիր մեզանչող կնոջ, եւ արժանի դարձուր զիս, որ անոնցմով թրջեմ սուրբ ոտքերդ, որոնք զիս կորուստի ճամբէն ետ դարձուցին: Ո՛վ Աստուած, կ'ուզեմ ոտքերդ լուալ արցունքներովս**»:

Երբ մարդ իրապէս այս աղօթքը աղօթելով իր շուրջը արցունքներով կը թրջէ Դաւիթ մարգարէին հետ ըսելով՝ «**Ամէն գիշեր եւ լացով լուացի իմ մահիճս**» (Սղ 6.6), ապա կը նշանակէ, որ անիկա սրտանց, անկեղծութեամբ ու հարազատութեամբ ապրած եղաւ ապաշխարութեան կեանքը, այլեւ շարունակ ապաշխարութիւնը կ'ապրի ու կը կիրառէ իր կեանքին մէջ: Սուրբ Անտոն Անապատականը կը թելադրէ՝ ըսելով. «**Ճրագդ աչքիդ արցունքներովը լեցուր**», իսկ Ս. Մովսէս (Խափշիկը) Եթովպացի կ'ըսէ. «**Որքան որ մեր կարելիութիւնը կը ներք, պետք է որ արցունքով աշխատիք Աստուծոյ առջեւ, որպէսզի ան իր անսահման գութով ողորմի մեզի, որովհետեւ անոնք որ արցունքով կը ցանեն՝ ուրախութեամբ ալ կը հնձեն**»:

Երբ մարդ իրապէս այս աղօթքը աղօթելով իր շուրջը արցունքներով կը թրջէ Դաւիթ մարգարէին հետ ըսելով՝ «**Ամէն գիշեր եւ լացով լուացի իմ մահիճս**» (Սղ 6.6), ապա կը նշանակէ, որ անիկա սրտանց, անկեղծութեամբ ու հարազատութեամբ ապրած եղաւ ապաշխարութեան կեանքը, այլեւ շարունակ ապաշխարութիւնը կ'ապրի ու կը կիրառէ իր կեանքին մէջ: Սուրբ Անտոն Անապատականը կը թելադրէ՝ ըսելով. «**Ճրագդ աչքիդ արցունքներովը լեցուր**», իսկ Ս. Մովսէս (Խափշիկը) Եթովպացի կ'ըսէ. «**Որքան որ մեր կարելիութիւնը կը ներք, պետք է որ արցունքով աշխատիք Աստուծոյ առջեւ, որպէսզի ան իր անսահման գութով ողորմի մեզի, որովհետեւ անոնք որ արցունքով կը ցանեն՝ ուրախութեամբ ալ կը հնձեն**»:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՈՐԻԱԿՈՒԹԻՒՆԸ

Հաւանական է հանդիպիլ մէկու մը, որ լերան մը չափ մեղքեր գործած ըլլայ եւ նստելով խոստովանաւոր քահանային մօտ բացայայտէ իր կատարածները խուցնելու անոր ականջը եւ արձակում ստանայ: Եւ ապա ուրախ դուրս գալ իբրեւ թէ բան մը ըրած չըլլար: Արդեօք ասիկա՞ է ապաշխարութիւնը: Ո՞ր են մեղքերուն համար թափուած արցունքը, լացը, սուգն ու տրտմութիւնը: Որովհետեւ Աստուածաշունչը կ'ըսէ. «**Տրտմութիւնը ծիծաղելն աղէկ է, վասն զի երեսին տրտմութիւնովը սիրտը**

Շար.՝ էջ 8

ՊԱՇՏՈՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ

Բերիոյ Յայոց Թեմի Կալուածոց Յոգաբարձութիւնը կարիքը ունի Ազգ. Գերեզմանատունէն ներս աշխատող միջին տարիքի պաշտօնեայի: Աշխատանքի ժամերն են երկուշաբթի օրուցն մինչեւ Շաբաթ, առաւօտեան ժամը 9:00-էն մինչեւ յետմիջօրեի ժամը 3:00: Թեկնածուները իրենց դիմումագիրները պարտին ներկայացնել Ազգ. Առաջնորդարանի Կալուածոց գրասենեակի քարտուղարութեան: Ցաւելեալ մանրամասնութեան համար դիմել հետեւեալ հեռաձայնի թիւերուն՝ 2122756 - 2122758:

Բերիոյ Յայոց Թեմի Կալուածոց Յոգաբարձութիւն

«ԳԱՆՁԱՍԱՐ»
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Խմբագիր՝ Չարմիկ Զիլմբօշեան-Պողիկեան
Սրբագրիչներ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան
Վեհան Պարսումեան
Ձեւաւորող՝ Յովսէփ Զալօղլեան
Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան-Աղայեկեան
Կայքէջի պատասխանատու՝ Ալօ Պողոսեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիլմբօշեան
Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան

ԷՐՏՈՂԱՆ ԿՐՆՂԱՅՆԷ ԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆ ՈԼՈՐՏԸ՝ ՄԻՆՉԵՒ ՖՐԱՆՍԱԿ ԵՒ ՅԱՄԱՅՆ ԵՐՈՂՈՎ



Յարութ Սասունյան

Անցեալ շաբաթ ես գրած էի Թուրքիոյ Լա-խազահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի՝ յաջորդ տարի իր վերընտրուելուն համար թուրք ամերիկացիներէ քուէներ հաւաքելու ծրագիրներուն մասին՝ Ուաշինկթընի մէջ իր իշխող կուսակցութեան («Առաջընթաց եւ զարգացում» (ԱԶԿ)) գրասենեակ բանալով եւ իր գարմիկը՝ դոկտ. Յալիլ Մուրլուն իբրեւ արձանագրուած լրագրող վարձելով: Էրտողան արդէն իսկ քաղաքական նախնական յաջողութիւն արձանագրած է Միացեալ Նահանգներու մէջ՝ ԱՄՆ Ծերակայտին համար Փենսիլվանիոյ հանրապետականներու նախնական ընտրութիւններուն թուրք ամերիկացի դոկտ. Մեհմետ Օզի յաղթանակով:

Այս շաբաթ կը փափաքիմ տեղեկացնել Լա-խազահ Էրտողանի՝ Ֆրանսայի մէջ ի գործ դրած քաղաքական նոյնանման ջանքերուն մասին՝ թրքական գործակալներ ներդնելով Ֆրանսայի օրէնսդիր մարմինն մէջ: Ասիկա Էրտողանի հե-

Սթրազպուրկ գտնուող *Cojep* ընկերակցութեան մէջ (*Conseil pour la justice, l'egalite et la paix*), որուն անունը կը թարգմանուի՝ *Արդարութեան, հաւասարութեան եւ խաղաղութեան խորհուրդ*», ըստ Intelligence Online-ի: 1985-ին ստեղծուած *Cojep*-ի տարեկան պիւտճէն կազմած է 300 հազար եւրո: Ասիկա *«կը պաշտպանէ շահերը Ռեճեպ Թայիպ Էրտողանի «թրքական «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեան, որուն մօտ է իր ղեկավարութիւնը»:*

Թեկնածու ճեղիլ Երլմազ *Cojep* ընկերակցութեան նախագահն է եւ Նախօրայի (Ֆրանսայի արեւելք) նախկին քաղաքային խորհուրդի անդամ: *Cojep*-ի տնօրէն Կետիքօղլու Յայոց Տեղապանութիւնը մոլի ժխտողներն է Եւրոպական խորհրդարանէն ներս, ուր ան խորհրդարանի Թափանցիկութեան գրասենեակին մէջ արձանագրուած է իբրեւ լրագրող: Ըստ Intelligence Online-ի՝ ան նաեւ կը բնութագրուի իբրեւ *«ԱԶԿ-ի լրատուական միջոցներու եւ մարդասիրական ներկայութեան շարժիչ ուժը Ֆրանսայի մէջ»:*



նահար նպատակն է 2010-էն ի վեր, երբ ան, Փարիզ կատարած այցելութեան մը ընթացքին կոչ ըրաւ Ֆրանսայի իր հայրենակիցներուն՝ քաղաքական պաշտօններ գրաւելու:

Բնականաբար, ոչ ոք կրնայ առարկել, որ թուրքերը Ֆրանսայի եւ Միացեալ Նահանգներու մէջ առաջադրուին քաղաքական պաշտօններու համար: Այսուամենայնիւ, երբ այսպիսի քաղաքական գործողութիւններ կը հրահրուին եւ աջակցութիւն կը ստանան օտարերկրեայ կառավարութեան մը, այս պարագային՝ Թուրքիոյ եւ անոր բռնակալ առաջնորդին կողմէ, լուրջ մտաւայնութիւններ կ'առաջանան այն մասին, որ քաղաքական այդ թուրք գործիչները կրնան գործիք դառնալ Էրտողանի ձեռքը՝ իր բռնակալական քաղաքականութիւնը թրքական սահմաններէն դուրս բերելու եւ հակահայկական դիրքորոշումներ քաղուելու համար:

Սթրազպուրկի մէջ գործող «Յաւասարութիւն եւ արդարութիւն» կուսակցութեան հիմնադիր Ալի Կետիքօղլու հետեւելով Էրտողանի հրամաններուն՝ *«(Ֆրանսայի) 2017 թուականի օրէնսդրական ընտրութիւններուն մէջ 50 թեկնածու ներկայացուց»,* կը հաղորդէ Intelligence Online: *«Յայտնի է նաեւ, որ Կետիքօղլու Թուրքիոյ արտաքին գործոց նախարար եւ ԱԶԿ-ի հիմնադիր անդամ Մեւլութ Չաւուշօղլուի մօտիկ գործընկերն է»:*

12 եւ 19 Յունիս 2022-ին կայանալիք Ֆրանսայի խորհրդարանական ընտրութիւններուն համար թրքական «Մետիաթուրք» լրատուական կայքը, համագործակցելով թրքական կառավարութեան պատկանող «Անատոլու» գործակալութեան ֆրանսերէն տարբերակին հետ, առաջադրած է երեք թուրք թեկնածուներ. *«Ֆրանսական եւ թրքական երկրաքաղաքացիութիւն ունեցող ճեղիլ Երլմազ (Աին 5-րդ ընտրատարածք). Եալչին Այվալի (Ռոնի 14-րդ ընտրատարածք) եւ ֆրանսացի մահմետական դեմոկրատներու միութեան թեկնածու Ռամազան Կալլի (Սոն-է-Լուարի 5-րդ ընտրատարածք)»:* Երեքն ալ *«ներգրաւուած են*

Յաջուի անունով ամբողջ Եւրոպայի մէջ Յայոց Տեղապանութեան լայն տարածում գտած ճանաչումը, Տեղապանութիւնը ժխտող թուրքերը կը դառնան Եւրոպացիներու ծիծաղի առարկան, ինչպէս ԱՄՆ-ի մէջ՝ Քոնկրետի երկու պալատներու եւ նախագահ Ռայտընի կողմէ Տեղապանութեան ճանաչումէն ետք: Թուրքիոյ կողմէ Յայոց Տեղապանութեան ժխտումը համարժէք է՝ «Երկրագունդը տափակ է» միտքը ապացուցելու փորձին:

Թեկնածու Երլմազի՝ *«Փարիզի դատախազութիւնը, 2018-ին, մեղադրած է «ատելութիւն հրահրելու» համար»,* կը յայտնէ Intelligence Online: *«Երլմազ ցուցադրած է մարդիկը իր կողմ համախմբելու կարողութիւնը, երբ ընկերային ցանցերու միջոցով միայն քանի մը վայրկեանի մէջ յաջողած է հաւաքել հարիւր թուրք՝ 2018 թուականի Յունուարին, Լիոնի մէջ Թուրքիոյ հիւպատոսութեան դիմաց քրտամետ բողոքի ցոյցը դիմակայելու համար»:*

Intelligence Online պարզած է, որ *«Երլմազ նաեւ կազմակերպած է Cojep-ի անձնակազմի հանդիպումը Զոնկոյի Դեմոկրատական Յանրապետութեան (ԶԴԳ) պաշտօնական պատուիրակութեան հետ, որ 2021-ի Օգոստոսին մեկնած էր՝ Թուրքիոյ կեդրոնատեղիին մէջ գրուցելու ԱԶԿ-ի բարձրաստիճան անդամներուն հետ: ԶԴԳ-ի պատուիրակութեան կազմին մէջ էր նախագահ Ֆելիքս Չիսըքետիի եղբայրը՝ Ռաճըր Չիսըքետի: Երլմազ նաեւ կը վստահի Cojep-ի միջազգային յարաբերութիւններու գծով փոխ նախագահ Սաթի Արիքին, որ տեղակալ է ԱԶԿ-ի կանանց մասնաճիւղի՝ «ԱԶԿ Զատին Զուարի»-ի խորհուրդին մէջ: Արիկ, որ ծագումով Սթրազպուրկէն է, մտերիմ է թուրք-գերմանական ԱԶԿ-ի պատգամաւոր Չաֆեր Սիդաքայայի հետ: Ըստ կուսակցութեան կայքին վրայ տեղադրուած անոր կենսագրութեան, ան Սիդաքայայի համար գրած է՝ «Մահմետականները Ֆրանսայի մէջ» թեմայով գեղարարներ: Միւս երկու թեկնածուները՝ Այվալի եւ Կալլի, իրենց կապը Cojep-ի հետ ցոյց կու տան միայն ընկերային ցանցերու միջոցով, թէւ Կալլի անոր տեղական կապեր ապահովող անձն է արեւելեան Ֆրանսայի Սոնս-է-Միսի համար»:*

Բացի Միացեալ Նահանգներէն եւ Ֆրանսայէն, Էրտողան լրագրողական խումբերու շղթայ ստեղծած է ամբողջ Եւրոպայի մէջ: Անոնք բաղկացած են *«Եւրոպայի թուրք դեմոկրատներու միութեան (Union des democrates turcs europeens), որ ստեղծուած է ԱԶԿ-ի կողմէ, Պրիւք-*

սելի մէջ (Պելճիքա) 2003-ին՝ աջակցելու համար Եւրոպական միութեան՝ միանալու Թուրքիոյ թեկնածութեան: Այդ օրուրնէ սկսեալ, այս կազմակերպութիւնը դարձած է ԱԶԿ-ի մօտիկ քանի մը փոքր կուսակցութիւններու մայր ընկերութիւնը, ինչպէս՝ «Be.one»-ը՝ Պելճիքայի մէջ, Բազմաձայնութեան իրաւունքի կուսակցութիւնը (Multicultural Recht Partij) Յունաստայի մէջ եւ Դաշինք Նորարարութեան ու արդարութեան համարը (Bondnis for Innovation und Gerechtigkeit) Գերմանիոյ մէջ», կը հաղորդէ Intelligence Online:

Թրքական լրագրողական հսկայածաւալ այս ջանքերը պետք է դիմակայեն բոլորը, այլ ոչ միայն հայերը: Թեւ Թուրքիա սնանկ երկիր է, սակայն Էրտողան որոշած է օգտագործել իր երկրին ֆինանսական սահմանափակ միջոցները՝ իր բանակը զինելու եւ թրքական քարոզչութիւնը ամբողջ աշխարհի մէջ տարածելու համար:

**Արեւելահայերէնի թարգմանեց՝
Ռուզաննա Աւագեան
Արեւմտահայերէնի վերածեց՝
Սեդա Գրիգորեան**

ԼԱՅՈՂ ...

Սկիզբ՝ էջ 7

Կը զուարճանայ» (Ժղ 7.3), իսկ մեր Տերը Յիսուս Զրիստոս կ'ըսէ. **«Երանի՛ սգաւորներուն, որովհետեւ անոնք Աստուծմէ մխիթարութիւն պիտի գտնեն»** (Մտ 5.4):

Երանի՛ որ, երբ զգանք թէ որեւէ բանով Աստուծոյ հայրական սիրտը խոցեցիկը եւ գայն նեղացուցիկը, հեռանանք զուարճութեան, խնդուքի, կատակելու եւ արտաքին ուրախութեան հոգիէն: Չաճապարենք ուրախանալու, որովհետեւ ուրախութիւնը պիտի հասնի քեզի, ինչպէս առիթով մը Յիսուս ըսաւ իր աշակերտներուն. **«Բայց եւ կրկին պիտի տեսնեմ ձեզ եւ ձեր սիրտերը ուրախութեամբ պիտի լեցունին, ուրախութեամբ մը՝ որ ոչ ոք պիտի կարենայ խլել ձեզմէ»** (Յհ 16.22), սակայն այդ ուրախութիւնը կու գայ տրտմութեան եւ սուգին միջոցաւ. **«Լա՛ւ գիտցեք, թէ դուք պիտի լաք եւ ողբաք, բայց աշխարհը պիտի ուրախանայ. դուք պիտի տրտմիք, բայց ձեր տրտմութիւնը ուրախութեան պիտի փոխուի»** (Յհ 16.20):

Ձեր ուրախութիւնը թող որ ներքին տրտմութեան մէջէն ծնի, այլապէս ձեր տրտմութիւնը ուրախութեան մէջէն պիտի ծնի: Ինչպէս Դաւիթ ըսաւ ապաշխարութեան սաղմոսին մէջ. **«Փրկութեանդ ցնծութիւնը տուր ինծի, եւ քու կամքիդ հնազանդ հոգի մը դիր իմ մէջս»** (Սղ 51.12):

Եթէ մարդ արտաքին ուրախութիւնը ապրեցաւ այն ժամանակ՝ երբ ան պետք էր լար, ապա անսպասելի արագութեամբ ինքզինք տրտմութեան մէջ պիտի գտնէ: Սակայն, եթէ մարդ իր կատարած մեղքերուն համար լայ, զոջայ ու ապաշխարէ, այդ ժամանակ կը գիտնայ իսկական ուրախութեան իմաստը եւ փրկութեան ցնծութիւնը, ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ. **«Միշտ ուրախ եղէք Տիրոջմով. դարձեալ կ'ըսեմ՝ ուրախ եղէք»** (Փլպ 4.4): Եւ «Տիրոջմով» արտայայտութիւնը մեզի կը վստահեցնէ, թէ այս ուրախութիւնը կը բխի Սրբութեան կեանքէն, Զրիստոս Աստուծմով ապրուած սուրբ կեանքին ընդմէջէն կը բխի:

Մեղաւոր մարդը իրաւունք չունի ուրախանալու, բայց այն մարդը, որ Զրիստոսի հետ ճաշակած է յաղթութեան քաղցրութիւնը, ան է որ կ'ուրախանայ ու յարութեան ուրախութիւնը կը ներգործէ իր կեանքին մէջ: Եւ ի՞նչ է յարութիւնը եթէ ոչ՝ մեղքին ու մահուան վրայ յաղթանակ տանիլը:

Եւ ասով մենք ըսել չենք ուզեր, որ մարդ շարունակ տրտմութեամբ պետք է ապրի եւ այդ տրտմութիւնը արտացոլացնէ իր շուրջիներուն վրայ, ընդհակառակը՝ հարկաւոր է, որ ան ուրախանայ յաղթանակով:

«ԴՈՒՔ ՄԵՅ ՄԸ ՅԱԼԵՊ ԵԿԵՔ...»



Նայիրի Ատուրեան-Ֆրանքեան

Սուրիոյ պատերազմէն ճողոպրած հալէպահայ Մանուշն ու իր պատանի տղաքը՝ Եգնիկն ու Անթոն, ապաստան գտան Չուիցերիա: Պսակածեւ ժահրի համաճարակին հետեւանքով սահմանուած պարետային օրերէն մէկը, նախքան շուկայ մեկնիլը անոնք դրացիներուն դուռը կը թակեն հարցնելու, թէ բանի մը կարիք ունի՞ն:

Անոնք, մինչ այդ, ըստ արեւմուտքի սովորութեան, յարաբերութիւն չունէին, պարզապէս չէնքին մէջ հանդիպելու պարագային իրարու կը բարեւէին: Անտեր, ծերունի գոյգը, որ բնիկ գուիցերիացի էր, շնորհակալ ըլլալով իր կարիքները կ'ապսպրէ՝ հաց, հակիթ եւ կաթ:



Անթոն շուկայէն վերադառնալով ապրանքը կը յանձնէ ծերունի տիկնոջ, իսկ վերջինս հարց կու տայ, թէ որքա՞ն է արժեքիւնը: Անթոն սիրայօժաբ «չ'ուզեր» կը պատասխանէ:

Տիկինը ապշահար նայուածքը տղուն դէմքին կեդրոնացնելով կ'ըսէ. «Կեանքիս մէջ գուիցերիացի մը այսպէս չ'եր ըրած», ապա կը շարունակէ. «Աշխարհի վրայ այսպիսի մարդիկ կա՞ն տակաւին»: Անթոն ժպտելով, մտովին կը մրթմրթայ. «Դուք մէջ մը Յալէպ եկէք...»:

Ես ալ կ'երկրորդեմ ու կ'աւելցնեմ, որ տնտեսաքաղաքական տագնապալի այս օրերուն, Յալէպի մէջ տակաւին գոյութիւն ունին ձմրան ցուրտին ու ամրան կիզիչ արեւուն տակ հացի երկար շարքերուն մէջ ժամերով սպասելէ ետք, իրենց հացէն այլոց բաժին հանողներ: Աւելին. սաստիկ ցուրտի օրերուն, սահմանափակ քանակով վառելանիւթ ունենալով մէկտեղ, ուրիշ մտողներու հետ իրենց վառելանիւթը բաժնեկցողներ, իրենց գաւակներուն բաժինէն անկար դրացիին գաւակներուն կաթ, ձէթ, հագուստ եւ այլն տրամադրողներ, դեղորայքի տագնապի օրերուն իրենց դեղերէն մաս մը այլոց տրամադրողներ, հետագային առանց դեղի մնալու հաւանականութիւնն իսկ իմանալով:

Տակաւին՝ կարիքաւորներու ճաշ պատրաստողներ եւ մինչեւ անոնց տունը հասցնողներ, ծերունի դրացին կամ անտեր բարեկամը լոգցնողներ, հիւանդանոցի մէջ, որպէս օգնական, վատառողջ բարեկամին գիշեր-ցերեկ հսկողներ կամ վիրահատութեան վարձքը ապահովելու համար հանգանակութիւն կազմակերպողներ:

Աւելին. մենակեաց կեանք վարողներուն այցելողներ ու իրենց ներկայութեամբ յուսադրողներ, իրենց յաւելեալ տունն ու խանութը կարօտեալ ընտանիքներու յատկացնողներ, սիւթական համեստ պայմաններով աշակերտներու դաս բացատրող ուսուցիչներ, իրենց տան ամբարտնա դրացիին բաժին հանողներ, ճամբորդութեան ատեն իրենց անձնական ինքնաշարժին մէջ նոյն ճամբուն ուղեկից հրաւիրողներ եւ այս բոլորը առանց փոխադարձ ակնկալութեան, պարզապէս մարդասիրութենէ մղուած, Եսասիրութենէ ազատագրուած, բարի գործերով ազնուացած:

Այսպիսի մարդիկ աշակից ձեռքեր ունեցողներ են, իրարու բեռ կրողներ, բարիք գործելէ չխուսափողներ, ժամանակը, առիթները նաեւ ծառայութեամբ շահարկողներ, գանձերը Վերը դիզողներ եւ ինչու չէ այս աշխարհին մէջ երկնաւոր Յայրը իրենց գործերով փառաւորողներ: «Այնպէս թող լուսաւորուի ձեր լոյսը մարդոց առջեւ, որ տեսնեն ձեր բարի գործերը ու փառաւորեն ձեր Յայրը, որ երկինքն է» (Մտ 5.16):

Այո՛, տիկին, թէեւ Յալէպ բնակողներուն քանակը նուազեցաւ, բայց Յալէպը մարդկայնութենէ չդատարկուեցաւ երբեք:

ԱՇԽԱՏԱՒՈՐԻ ԿԱՐԻՔ

Սուլէյմանիէի մէջ Վաճառականական գրասենեակ մը կարիքը ունի աշխատաւորի մը 20-45 տարեկան: Օրական 8 աշխատանքային ժամով:
Յետաքրքրուողները կրնան հեռաձայնել հետեւեալ թիւերուն՝ 4653066 - 4603179, ամէն օր առաւօտեան ժամը 9:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 5:00:

ԶԿՆՈՐՍՈՒԹԻՒՆ



Յարվարդ

- 1 Մակոյկը միևնակ մակոյկը կոչնակ մենք բեղմն-հովին տրուած մակոյկը
- 2 Կապոյտը մուգ սպունգ - շուրթ մուր-մենք գինեխում մենք խորունկ կապոյտ
- 3 Գիշերը ձկան մաղ գիշերը սեւ հայելի-մենք խոր վերքի աղ մենք ալեբեր գիշեր
- 4 Խիճերու շարն ընդ ծով ճակատագրի գիծ մենք բախտագուշակ ափ-մենք ընդերկար խիճ

Պակաս
«Ալեուշա՛ ճաշարան»
30.05.2021



Նայած
թէ ի՞նչ կայ
սրտին
մէջ,
խի՞ճ կայ
թէ՞ խի՞ճ

Եթէ կան
շատ խիճեր
ուրեմն
սիրտ չէ ատիկա
այլ գանձանակ մը
անբանալի

Եթէ կայ
անսպառ խիճ
ուրեմն
սիրտ չէ ատիկա
այլ աղբիւր մը
անյագուրդ

Նայած,
նայած թէ
ի՞նչ կայ
միջուկին մէջ՝
փշո՞ւր
թէ՞ գուլալ ջուր

05.09.2021
Յալէպ

ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼ

Շուրթ
նոյն տեղը կ'իյնայ
չի գանազաներ
ճակա՞տդ է պատին
թէ՞ դէմքդ՝ արեւին

Չուրդ նոյն
որ այդքան
ծանր կը կարծեիր

14.01.2022
Երեւան

ԻՆՉ ԿՐԱՅԵՆ ԱՍՏՂԵՐԸ



ԽՈՅ
Ձղագրգիռ մի՛ ըլլաք ձեր յարաբերություններուն մէջ, սիւալ արտայայտութիւնները կրնան հետք ձգել ձեր խօսակցիցներուն հոգեկան աշխարհին մէջ:



ՅՈՒԼ
Ամրան արձակուրդի կարիք ունիք, որպէսզի կարենաք ձեր միտքը թարմացնել եւ նոր ծրագիրներ մշակել:



ԵՐԿՈՒՐԵԱԿ
Ձեր գաւակներուն որոշ ազատութիւն շնորհեցէ՛ք, որպէսզի ինքնուրոյն ըլլան իրենց մտածելակերպով եւ համարձակութիւն ձեռք բերեն ընկերային կեանքի մէջ:



ԽԵՑՁԵՏԻՆ
Որեւէ յաջողութիւն տքնաշան աշխատանքի կը կարօտի, մակերեսային աշխատանքը արդիւնաւետ չի կրնար ըլլալ: Աշխատեցէ՛ք ձեր ծրագիրները լաւ որակով կեանքի կոչել:



ԱՌԻԾ
Յամառօրէն մի՛ պարտադրեք ձեր տեսակետը այլոց, կարծիք արտայայտելու առիթ տուէ՛ք ձեր գործընկերներուն:



ԿՈՅՍ
Դժուարութիւններու փուլը անցած է, ներկայիս արդէն հանգիստ եւ ուրախ օրեր կը սպասեն ձեզի: Բացառիկ առիթներ պիտի բացուին ձեր դիմաց, օգտուեցէ՛ք:



ԿԵԻՈՔ
Ձեր ծրագիրներուն մասին մի՛ խօսիք անդադար: Թոյլ տուէ՛ք, որ անոնք իրականանաւ յանգարիչ տարրերու միջամտութեան, ապա մարդիկ տեղեկանան:



ԿԱՐԻՃ
Ամրան արձակուրդին պիտի վայելէք հեռուոր երկիրներէ ժամանած ձեր բարեկամներու ներկայութիւնը: Արձակուրդ առէ՛ք ու վայելեցէ՛ք անկեղծ ընկերներու հետ ժամանցը:



ԱՐԵՂԱՄՈՐ
Պիտի կարծեք, թէ բոլոր դժները մեկիկ-մեկիկ կը փակուին ձեր դիմաց եւ դուք անել կացութեան դէմ յանդիման եք: Այս վիճակը անցողակի է, շուտով լոյսի նշոյլ մը պիտի երեւայ:



ԱՅԾԵՂՋԻՐ
Ձերբազատեցէ՛ք անձերը կամ նոյնիսկ ձեր գաւակները գերզնահատելու սովորութենէ: Ասիկա կրնայ գերադասութեան որոշ բարոյութիւն յառաջացնել անոնց մօտ:



ՋՐԴՈՍ
Կրկնուած ծրագիրները մի՛ որդեգրեք միութեանկան ձեր կեանքին մէջ: Նորութիւններ գտէ՛ք, արդիական միջոցներ որդեգրեցէ՛ք, որպէսզի քայլ պահեք օրուան հետ:



ՁՈՒԿ
Նոր աշխատանքի դիմում մը առիթ պիտի ըլլայ նոր գաղափարներով եւ ներուժով լծուելու ապագայի ծրագիրներու իրականացման:

ԽՄՃԱՆԿԱՐ



Նուշիկ Սողոյեան-Առաքելեան

Չայ Գրողներու Յուշերէն

Յովհաննէս Թումանեան անձի ինքնագարգացումը շատ կարելի կը համարէր: Մարդու գարգացման գործընթացին մէջ ընթերցանութեան, ինքնագարգացման, գրոյցին, անձնական յարաբերութիւններուն աւելի մեծ տեղ կու տար, քան դպրոցին: Յաճախ կ'ըսէր. «Մեր տունը ձեզ համալսարան»:

Իսկապէս այլ, Թումանեանի դուստրը կը պատմէ, որ իրենց տունը համալսարան մըն էր հոր ճոխ գրադարանով, նշանաւոր հիւրերով, իմաստուն գրոյցներով, ժամանակի իրականութեան հետ ունեցած լայն յարաբերութիւններով: Շատ կը փափաքէր, որ գաւակները դառնան նուրբ եւ ազնիւ ճաշակի տեր մարդիկ:

Ան կ'ըսէր. «Ամէնից շատ ինձ մարդու անճաշակ լինելն է բարկացնում: Ամենագլխաւորը կեանքում՝ ճաշակն է: Ճաշակը կեանքի բոյուն է»:



ԳԵՂԵՑԻԿ ՏԵՍԶ ԵՒ ԼԱՒ ՍՆՈՒՆԴ



Որեւէ հիւրասիրութեան ընթացքին սեղանին գլխաւոր գարդերը կ'ըլլան պտուղները, որոնցմով ձեւաւորուներ կատարելը երեւակայութիւն, նրբութիւն, ճաշակ եւ քիչ մըն ալ հմտութիւն կը պահանջէ:

Մեծ խոհարարներու մօտ պտուղներու շքեղ յարդարանքը դարձած է արուեստի իւրայատուկ տեսակ: Մեր մարմինը լաւապէս կ'ընդունի այն ուտելիքները, որոնք՝ սննդարար, բայց մանաւանդ աչքին հաճելի են:

Պտուղները՝ իբրեւ սննդանիւթ կարելի է մատուցել ամբողջութեամբ (լման) եւ շերտուած: Շերտուած վերածուած պտուղները գրաւիչ տեսք մը կու տան սեղանին: Կարելի է նաեւ գանոնք աղցանի վերածել ետք սպասարկել հիւրերուն:

ԽՈՐԱԳԻՐ

ՊՏՈՒՂՆԵՐՈՒ ԱՂՅԱՆԻ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԵԱՆ ՁԵՒԵՐ ԵՒ ԽՈՐՅՈՒՐԴՆԵՐ

Պտուղի աղցանները կարելի է պատրաստել գանազան պտուղներով՝ նարինջ, խնձոր, ծիրան, սալոր, նուռ, պանան, դեղձ, տանձ, խաղող, կեռաս եւ այլն: Չանոնք շերտերու վերածելէ ետք եթէ հեռացնէք ցօղուններն ու կեղեւները, աւելի հաճելի տեսք կ'ունենան:

Բոլոր պտուղներն ալ նոյն քանակութեամբ պէտք է օգտագործել եւ մատուցել պատրաստել անմիջապէս ետք: Աղցանին կարելի է ավելցնել նաեւ հազար կամ պանիր, ինչպէս նաեւ՝ մեղր կամ պաղպաղակ (ըստ ճաշակի):

Կիտրոնի հիւթը աղցանին համը կը շէշտե եւ պտուղներուն գոյնը կը պահպանէ:

Աւելի հետաքրքրական եւ գրաւիչ տեսք մը ունենալու համար աղցանը կարելի է գետեղել նարինջի, սեխի կամ ձմերուկի կեղեւներուն մէջ (ծաղկամանի տեսքով), գայն գարդարելով հալած տուրմի կտորներով:



ԴԴՈՒՄՈՎ ԿՐԵԹԱՆ (GRATIN)

- Բաղադրութիւն**
 1 քիլօ դդում
 1 գլուխ սոխ
 1 հատ ստեպոլին
 1 հատ պղպեղ
 Աղ-սեւ պղպեղ
 Ձիթաիւղ
 100 կրամ մոզարելլա պանիր
 3 դգալ կարկանդակի փոշի



Պատրաստութիւն
 Դդումները կիսել, միջուկները հանել, կտրտել: Փուռի ափսէին մէջ (մոմուած թուրջով պատուած) շարել գանոնք, իւրաքանչիւրին վրայ ձէթ քսել, համեմել աղով, սեւ պղպեղով եւ 200 ջերմաստիճան փուռի մէջ 10 վայրկեան եփել:

Մանրուած սոխը ձէթի մէջ 2 վայրկեան թոռմեցնել, ապա վրան ավելցնել քերթուած ստեպոլինը, խորանարդածէ կտրտուած պղպեղը, դդումներուն միջուկ եւ բոլորը համեմել աղով, սեւ պղպեղով: Յետոյ տապակին կափարիչը գոցել ու եփել: Դդումները շարել ապակեայ փոս ամանի մը մէջ: Իւրաքանչիւրին վրայ գետեղել պատրաստուած միջուկէն: Ապա կարկանդակի փոշին ու քերթուած պանիրը ավելցնել եւ եփել 200 ջերմաստիճան փուռին մէջ, 15 վայրկեան:

Բարի ախորժակ



Ռաֆֆի Սիկանյան

ՀԱՅԿԱԿԱՆ

ԴԱԻԹ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ՝ ԾԱՆՐԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՆՈՅԵԱՆ, ԱՐՎ ԱՂԱՆԵԱՆ ԵՒ ՍԱՄՈՒԷԼ ԳԱՍՊԱՐԵԱՆ՝ ՓՈԽԱԽՈՅԵԱՆ

Այսպիսի մայրաքաղաք Թիրանայի մեջ տեղի ունեցող Եւրոպայի ծանրաբարձութեան ախոյեանութեան 96 քլ. դասակարգի մրցումներուն տիրապետեցին Հայաստանի ներկայացուցիչները:

Դաւիթ Յովհաննիսեան արձանագրելով 377 քլ. արդիւնք մը (171 + 206), հանդիսացաւ Եւրոպայի ախոյեան:

Իսկ փոխախոյեան հանդիսացաւ Հայաստանի երկրորդ ներկայացուցիչը՝ Արա Աղանեան, որ բարձրացուց 375 քլ. (170 + 205):

102 քլ. դասակարգին մէջ, Սամուէլ Գասպարեան երկամարտի մրցումներուն արձանագրելով 390 քլ արդիւնք մը, հանդիսացաւ Եւրոպայի փոխախոյեան:



Յատկանշական եղաւ այն, որ ան նախորդ տարի եւս նոյն արդիւնքը արձանագրելով հանդիսացած էր Եւրոպայի ախոյեան:

109 քլ. դասակարգի մրցումներուն, Արսէն Մարտիրոսեան, որ 2021-ին հանդիսացած էր Եւրոպայի փոխախոյեան, այս տարի արձանագրելով 371 քլ. արդիւնք մը, տիրացաւ պրոնզէ մետալին:

Ինչ կը վերաբերի աղջկանց մրցումներուն, վեց տարուան դադարէ մը ետք, Հռիփսիմէ Խուրշուտեան ունեցաւ յիշատակելի վերադարձ մը:

87 քլ. դասակարգին մէջ ան երկամարտի մրցումներուն արձանագրելով 227 քլ. արդիւնք մը, գրաւեց 5-րդ դիրքը:

ՀԱՅ ԲՈՆՏԵԱՍԱՐՏԻԿԸ ԶԱՆՁԱՆԻՉ ԴԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵՑ ԹՈՒՐԸ ՄՐՑԱԿԱՅԸ

18-ամեայ բռնցքամարտիկ Եղուարդ Զուրդեան Գերմանիոյ մէջ տեղի ունեցած Համաշխարհային Նոր տաղանդներու ընտրական մրցումին չափաչափիչ պարտութեան մատնեց թուրք մրցակիցը՝ նուաճելով WORD GLORY աշխարհի առաջնութեան ուղեգիրը:



«Յաղթանակս կը նուիրեմ Հայաստանին», 168.am-ի հետ զրոյցի ընթացքին փոխանցած է բռնցքամարտիկը:

Մեր հայրենակիցը մարզանքով կը զբաղի 10 տարեկանէն ի վեր:

Եղուարդ Զուրդեան վերջին 4 տարիներուն արձանագրած է 41 յաղթանակ եւ ոչ մէկ պարտութիւն:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՓԱՐԻՉ ՍԵՆ ԺԵՐՄԱՆ ԴԱՇՏՕՆԱԿ ԴԻՏԻ ԸՆԷ ՓՈՔԵԹԻՆՕՆ

Ֆրանսական «Լա Փարիզիէն»-ը յայտնեց, որ Ֆրանսայի ֆութպոլի ախոյեան Փարիզ Սեն Ժերմենի ղեկավարութիւնը որոշեց պաշտօնանկ ընել ակումբի գլխաւոր մարզիչ արժանիքիցի Մաուրիցիո Փոքեթինօն:

50-ամեայ Փոքեթինօ ակումբին մարզիչ նշանակուեցաւ Յունուար 2021-ին:

Անոր պայմանագրութիւնը նախատեսուած է մինչեւ յառաջիկայ տարեշրջանին աւարտը:



Անոր հետ մայրաքաղաքի կազմը կատարեց 84 մրցում, արձանագրեց 56 յաղթանակ, 13 հաւասարութիւն եւ կրեց 15 պարտութիւն:

Վերջին երկու տարեշրջաններուն ակումբին արձանագրած ձախող արդիւնքները՝ «Չեմփիընզ Լիկ»-ի ֆութպոլի մրցաշարքին գծով, հանդիսացան մայրաքաղաքի կազմի ղեկավարութեան գլխաւոր մտահոգութիւնը, հետեւաբար ան որոշեց հեռացնել Փոքեթինօն:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 393)

Պատրաստեց՝ Մարինա Զիւլքարօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1									■			
2				■			■					
3	■											■
4								■			■	
5		■										
6						■					■	
7									■			
8	■		■			■						■
9								■				
10			■									
11	■						■					
12							■					■

Հորիզոնական

1. Ժողովրդային ասացուածքը կ'ըսէ. «Ձուրն ինկողը չի վախնար»: Գոյութիւն ունին:
2. Քայ: Հակառակ՝ յարաբերական դերանուն: Գոյն:
3. Կրկնուած ձայնաւորներ: Հայաստանի Կոտայքի եւ Արագածոտնի մարզերուն մէջ գտնուող լեռ:
4. Մաքուր, անխաղախ:
5. Տախտակամած:
6. Անկուշտ: Ուղեղի ոսկորէ պատեան:
7. Կակուղ եւ կաչուն: Հայ գուսան:
8. Ձայնակիչ: Տառի մը անունը:
9. Անասունի կերակուր: 2030: Ընթացք:
10. Ռամկորէն՝ այր: Իգական անուն: Փոխանակ:
11. Խայտալ: Անսկզբնատառ՝ իգական անուն:
12. Ուղեղը հարուած: Բայական լծորդութիւն:


Ուղղահայեաց

1. Կրկնուած ձայնաւորներ: Հայ նահապետ: Իրերայաջորդ տառեր:
2. Թուր: Ակնարկ:
3. Ձի ինամող: Հակառակ՝ անձնական դերանուն:
4. Ձայնաւոր տառեր: Հակառակ՝ 6050:
5. Յոգնակերտ մասնիկ: Հակառակ՝ մահու վիշտ: Հակառակ՝ երկբարբառ:
6. Հակառակ՝ շողկապ: Բայական լծորդութիւն: Արտասուել:
7. Գաղթող թռչուն:
8. Յոգնակերտ մասնիկ: Արժեք:
9. Հակառակ՝ տարածքի միաւոր: 4400:
10. Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, եղած է 1915-ի վանի պաշտպանութեան կազմակերպիչներէն եւ զինուորական խորհուրդի անդամ:
11. Իգական անուն: Կերակուրի հիւթ (սոս):
12. 403: Ձայնակիչ: Անքուն մնացած:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 392)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	կ	ա	մ	ա	կ	ա	ք	մ	ա	ն	կ	
2	ա	ր	ի	չ	մ	ա	Թ	ա	ն	ո		
3	ր	գ		ի	ն	ժ	փ		յ	ա	մ	ր
4	օ	ա	է	Թ	Թ	ր	յ	ա	ս			
5	ս	ս					Յ	Յ	տ			
6	ա	ա					Ե	լ	ա	ք	ա	
7	ս	ւ	ո	ն	ա	ա	պ	յ	ք			
8	ո	ո		ա	ն	ի	ք	լ	ե			
9	լ	ք	տ	կ	ա	ր	ի	ք				
10	ն	ա	ք	մ	ա	տ	ա	ի	ի	լ		
11	ի	ա	ք	մ	ի	ք	ա	մ	ն			
12	պ	ա	տ	կ	ե	ք	ա	մ	ա	ր	տ	

ԼՈՒԹՈՒՄ



ԼԱՌԱՔԻՈՅ ՄԵՅ ՀՀ...

Սկզբը՝ էջ 1

դիմագիծը եւ որ հպարտութիւնն է իւրաքանչիւր հայու: Գաթրճեան յոյս յայտնեց, որ հայութեան միասնական ջանքերով Արցախը արժանանայ իր անկախութեան միջազգային ու արդարացի ճանաչման:

Գեղարուեստական յայտագիրով Յակոբ Արզումանեան լուսագեց «Երեւան, Էրեբունի» եւ «Ազգ Փառապանծ» ստեղծագործութիւնները (դաշնամուր):

Ապա Յովհաննէս Շիրազի «Յայոց Տանթեականը» քերթուածը տպաւորիչ առգանութեամբ ասմունքեց Յովսէփ Գաթրճեանը:

ՍԵՄ-ի Երիտասարդուհիները

ապագային:

Մանոյեան անդրադառնալով Յայաստանի Յանրապետութեան կերտման փուլերուն եւ ազգային միասնականութեան ու պայքարին, հարց տուաւ, որ եթէ նման պայքարի ոգի չունենար մեր ժողովուրդը եւ 28 Մայիս 1918-ը գոյութիւն չունենար, ի՞նչ ճակատագիր կ'ունենար Յայաստանը: Ան շեշտեց, որ ՅՀ Դաշնակցութեան գործակցութեան ոգին Բաշ Ապարանի, Դարաքիլիսի եւ Սարդարապատի ճակատամարտերու ընթացքին, այնուհետեւ Յայաստանի պետականութեան կերտման տարիներուն իր պտուղները տուաւ եւ հայ ժողովուրդը վեց դարերու ստրկութենէ ետք իր անկախ հանրապետութիւնը կերտեց:

Ապա Մանոյեան անդրադար-



ծաղկեցուցին բեմը «Յաղթանակի Պար»ով:

Այնուհետեւ Սուրիոյ Պատանեկան Միութեան եւ ՍԵՄ-ի երիտասարդները ուս-ուսի, եռագոյն դրօշներով ու «Չարթիկ, Լաօ՛» երգը վանկարկելով բեմ բարձրացան:

Ետքը Պատանեկան Մարմինին խօսքը ուղղեց Աւօ Կարպուշեան, որ կոչ ըրաւ գոյատեւելու եւ մաքառելու, որպէսզի շատ մը ազգերու նման չկորսնցնենք մեր ինքնութիւնը

ձաւ Յայաստանի ու Արցախի ներկայ քաղաքական կեանքին, մարտահրաւերներուն, յանուն հայրենիքի ու մեր ինքնութեան պահպանման Յայաստանի մէջ ծայր առած «Չարթիկ, Լաօ՛» խորագիրը կրող անհնազանդութեան խաղաղ ցոյցերուն, ոստիկանութեան կիրարկած բռնութեան եւ տարածաշրջանի պայթիւնավտանգ իրավիճակին:

Բանախօսը ըսաւ, այնպէս ինչպէս անցեալի մեր կամաւորները



տարբեր պատճառներով: Ան դիտել տուաւ, որ հայ ազգը ապրեցաւ ու գոյատեւեց ամէն գնով եւ ընդմիջտ պիտի պայքարի իր գոյութեան, իրաւունքներուն, Յայաստանի եւ Արցախի ազատութեան համար, իսկ 28 Մայիս 1918-ը մեր յառաջընթացի ներշնչման աղբիւրը պիտի մնայ:

Օրուան բանախօս, ՅՀԴ Բիւրոյի անդամ եւ Յայ Դատի ու քաղաքական հարցերու գրասենեակի պատասխանատու Կիրօ Մանոյեան շեշտեց, որ պայքարի կամքը հաստատուն է հայ ազգի էութեան մէջ ինչպէս անցեալին, նոյնպէս ալ այսօր ու պիտի մնայ հաստատուն

պատրաստ էին պայքարի ճակատ մեկնելու, Սեպտեմբեր 2021-ի քառասունչորս օրեայ պատերազմի առաջին օրերուն ալ մեր կամաւորները Արցախ մեկնեցան, բայց փոստ, հինգ հազար զոհ տալով Յայաստան սերունդ մը ամբողջ եւ հայրենի տարածք կորսնցուց:

Ան դիտել տուաւ, որ Յայաստան սոսկալի տագնապալի օրեր կ'ապրի, այրուհանդերձ պետք է պայքարինք ու չյուսահատինք՝ պինդ մնալու ազատ եւ անկախ Յայաստանի Յանրապետութեան յարկին տակ:

Յանդիտութիւնը ւարտին հասաւ Տէր հօր «Պահպանիչ» աղօթքով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա...

Սկզբը՝ էջ 1

ճանք: Բացման խօսքով հանդէս եկաւ Արաքօ Արամեան, ապա իրենց սրտի խօսքերը արտասանեցին Յայ Կաթողիկէ Յամայնքի ժողովրդապետ Յայր Եսայի Կրդ. Լուիսեան եւ Յայ Աւետարանական Յամայնքի Յո-



վի Պատուելի Ծանօ Ակիշեան:

Խրախճանքը վարեց Նշան Լուեան: Ժողովրդական եւ ազգային յեղափոխական երգերով ելոյթ ունեցան Խաչիկ Աշճեանն ու Սեւակ Պետուրեանը, լուսագեցութեամբ Կարօ Յայրապետեանի:

Ջերմ ու խանդավառ մթնոլորտի մէջ ներկաները նշեցին 28 Մայիսի տօնը:

Իսկ Չորեքշաբթի, 1 Յունիս 2022-ին, Զեսապի «Սարդարապատ» սրահէն ներս տեղի ունեցաւ

եւ տարածաշրջանային ներկայ կացութեան մէջ եւ յատկապէս Արցախեան 44-օրեայ պատերազմի հետեւանքով հայկական երկու հանրապետութիւններուն հանդէպ թուրքիոյ եւ Ատրպէյճանի ռազմաքաղաքական համագործակցութեամբ շարունակուող յարձակողական եւ ծաւալապաշտական սպառնալիքները, ի գործ դրուած փանթուրանական ծրագիրը եւ անոնց հաւանական



ծակր հետեւանքները, որոնք կրնան ըլլալ աղետաբեր, անոնց առաջընդհանուելու պարագային:

Բանախօսը քաղաքական-վերլուծական համապատկերի մէջ ներկայացուց 2018-էն ասդին Յայաստանի իշխանութիւններուն ազգակործան եւ պետականաքանդ շարունակուող քաղաքականութիւնը, որուն հետեւանքով է որ Յայաստան, Արցախ եւ ամբողջ հայութիւնը յայտնուած են պետականութիւնը կորսնցնելու վտանգին առջեւ:



Յայաստանի Յանրապետութեան Ա. Անկախութեան 104-ամեակին նուիրուած տօնակատարութիւն: Բացումը կատարուեցաւ Սուրիոյ եւ Յայաստանի քայլերգներով, որմէ ետք ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լուծեցին յարգեցին Յայ ժողովուրդի բոլոր նահատակներուն յիշատակը:

Բացման խօսք արտասանեց Արաքօ Արամեան: Յանդիտութեան գեղարուեստական բաժնին մասնակցեցան Սուրիոյ Պատանեկան Միութեան «Քրիստափոր» Մասնաճիւղէն խումբ մը պատանիներ (խմբային երգեր), Անդրանիկ Յանեքեհեան (մենեղ), Վարդիսէ Աղապաշեան Դանիէլեան (ասմունք):

Օրուան խորհուրդն ու պատգամը ներկայացուց ՅՀԴ Բիւրոյի անդամ, Յայ Դատի եւ քաղաքական հարցերու գրասենեակի պատասխանատու Կիրօ Մանոյեան: Յայաստանի Ա. անկախութեան յատկանշական իրադարձութիւններուն անդրադառնալով՝ ան վեր առաւ Մայիս 28-ի պատմական եւ այժմեական նշանակութիւնը, հանգամանօրէն եւ լայն տեսադաշտի մէջ ներկայացուց աշխարհաքաղաքական

Մանոյեան նշեց այն գոյութեանական մարտահրաւերները, որոնց դէմ յանդիման կը գտնուիք իբրեւ պետութիւն եւ ազգ, ընդձեռն Յայաստանի իշխանութիւնները հեռացնելու պահանջին քաղաքական բանական անհրաժեշտութիւնը, որովհետեւ միայն այդ կերպով կարելի կը դառնայ շրջադարձային բեկում յառաջացնել ներկայ վտանգալից գործընթացներուն մէջ: Ներհայաստանեան քաղաքական նպատակային իրադարձութիւններուն շրջագիծին մէջ շեշտեց ու արժեւորեց «Չարթիկ, Լաօ՛» նշանաբանով օր ըստ օրէ ընդարձակուող համաժողովրդային եւ համահայկական դիմադրական շարժման փրկարար կարեւորութիւնն ու անխուսափելի յաղթանակը:

Յանդիտութեան աւարտին բեմ բարձրացաւ երգիչ Սեւակ Պետուրեան, որ փունջ մը ազգային-յեղափոխական երգերով փակեց հանդիտութիւնը:

Փա՛ռք ու պատիւ 28 Մայիսը կերտող անմահ հերոսներուն:

Կեցցէ՛ 28 Մայիսը, իր խորհուրդով եւ պատգամով, կեցցէ՛ ազատատենչ հայ ժողովուրդը: